

Կ. Ս. Ակրտումյան և Ն. Ս. Ակրտումյան

ԷԼ. ՓՈՍՏ karinemkrtumyan@rambler.ru

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ



I թողարկում

ԽՄԲԱ ԳԻՐ ԵՎ ՍՐԲԱ ԳՐԻՉ՝
ՆԱՐԻՆԵ ՍԿՐՏՈՒՄՅԱՆ
ՍՈՒՏՔԱ ԳՐՈՂ ԵՎ ՀԱՍԱԿԱՐ ԳՉԱՅԻՆ
ԶԵՎԱՎՈՐՈՂ՝
ԿԱՐԻՆԵ ՍԿՐՏՈՒՄՅԱՆ

Նյութերը հավաքեցին և քարզմանեցին
Կ. Ս. Մկրտումյանը և Ն. Ս. Մկրտումյանը



ԲՆՈՒԹՅԱՆ ԴԵՂԱՏՈՒՆ



ԵՐԵՎԱՆ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2009

ՄԱՏԵՆԱԾԱՐԻ ԱՅՍ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՄԵԶ ՏԵՂ ԵՆ ԳՏԵԼ

❖ Արյան բարձր ճնշում	5
❖ Հյութաբուժությունը և հիպերտոնիան	11
❖ Հրաշագործ ասպիրինը	13
❖ Ջրի արյունահոսություն	15
❖ Ջերմություն	17
❖ Բրոնխիտ	18
❖ Ատամնացավ	21
❖ Բերանի «զարդը»	23
❖ Ատամ քայքայողը	26
❖ Շնչառության գաղտնիքը	27
❖ Սակավարյունություն	29
❖ Սովարություն	33
❖ Անգիճա	39
❖ Փոտախտ	41
❖ Պեպեններ	43
❖ Դիարեւ	47
❖ Վերքեր	51
❖ Փորլուծություն	55
❖ Համեմունքները երկարակեցություն են պարզեցում.....	58
❖ Աղավնու բուժիչ հատկությունները	61
❖ Թթի բուժիչ հատկությունները	63

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մարդն իր ոչ ճիշտ ապրելակերպի պատճառով, երբեմն էլ իր կանքից անկախ (ժառանգաբար) ձեռք է բերում իիվանդություններ: Մայր բնությունը, գրասիրու գտնվելով, դրանց բուժման համար տվել է բազում դարմաններ, որոնց մասին իմանալն ու առողջ ապրելն անհրաժեշտություն է յուրաքանչյուրին համար:

Այս մատենաշարում ընդգրկված են հայկական, ռուսական, չինական, տիբեթական, սերբական, վրացական և շատ այլ բժշկարանների կողմից առաջարկվող լավագույն դեղատումները: Ներկայացված են նաև առօրյա կյանքում առավել հաճախ հանդիպող իրավիճակների, անցանկալի պատահարների ժամանակ կիրառվող մի շարք միջոցներ, որոնց շնորհիվ կարող եք օգնել ոչ միայն ձեզ, այլև օգնության կարիք զգացող մարդկանց:

Թեև առաջարկվող բուժամիջոցները հասանելի են ամենքն և արդյունավետ, այնուամենայնիվ դրանք օգտագործելուց առաջ ցանկալի է խորհրդակցել բժշկի հետ, քանի որ ամեն մի օրգանիզմ ունի իր առանձնահատկությունները: Կիրառեք տրված դեղատումներն ի շահ ձեր առողջության և այս գիտելիքներով օգտակար եղեք ամենքին:

ԱՐՅԱՆ ԲԱՐՁՐ ԾՆՇՈՒՄ

Երկրագնդի յուրաքանչյուր տասներորդ բնակիչ տառապում է արյան բարձր ճնշմամբ՝ հիպերտոնիայով: Այս հիվանդությունը շատ է տարածված ԱՄՆ-ում, ճապոնիայում, Եվրոպական Երկրներում: Հազվադեպ է հանդիպում Հնդկաստանում, Արևելյան Աֆրիկայում, Հարավային Ամերիկայում: Հայտնի է, որ արյան ամենաբարձր ճնշում ունեն նեգրերը, ամենացածրը՝ չինացիները (բայց միայն՝ չինաստանաբնակները): Սակայն հարկ է նշել, որ հիպերտոնիայի պատճառը ոչ թե ռասայական առանձնահատկությունն է, այլ՝ շրջակա միջավայրը: Արյան բարձր ճնշման հետևանքով ավելի շատ մարդիկ են մահնում, քան՝ քաղցկեղից և ճանապարհատրանսպորտային պատահարներից:

Հիպերտոնիան, որպես հասկացություն, ի հայտ է եկել այն ժամանակ, երբ բժիշկները սովորել են չափել արյան ճնշումը: 1733 թ. անգլիացի հետազոտող, գավառական պաստոր Ստիվեն Խելլսը ծիու ազդրի երակի մեջ մտցրել է ապակե խողովակ և հետևել, թե ինչ բարձրությամբ է այն լցվում արյամբ: Արյունը բարձրացել է մինչև 290 սմ: Այսպես են սկսվել արյան ճնշումը չափելու հետ կապված գիտական հետազոտությունները: 1896 թ. իտալացի մանկաբույժ Ոիվա-Ռոչին ճնշումը չափելու համար ստեղծել է մի գործիք:

Մարդն օգայուն է մթնոլորտային ճնշման փոփոխությունների նկատմամբ: ճնշման նվազագույն անկման դեպքում ուղեղին ուղարկվում են ազդանշաներ, որոնք կենտրոնական նյարդային համակարգի միջոցով ազդում են արյունատար անոթների վրա՝ նեղացնելով կամ լայնացնելով դրանք: Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության, առողջ է համարվում այն հասուն մարդը, որի արյան ճնշումը 140/90 է: Հիպերտոնիան սկսվում է 160/95 ճնշումից:

20-25%-ի դեպքում հիպերտոնիան համարվում է որևէ

կոնկրետ հիվանդության հետևանք (օրինակ՝ երիկամների, ներքին սեկրեցիայի գեղձերի և այլն): Այդ ժամանակ այն կոչվում է ախտանշական: Ախտանշական հիպերտոնիան հայտնաբերվում է հետազոտման ժամանակ: Մնացյալ 75-80%-ն առաջնային հիպերտոնիան է, որը երկար տարիներ կարող է մնալ չախտորոշված:

Այրան բարձր ճնշումն առաջանում է սակավաշարժությունից, ավելորդ քաշից, սխալ սննվելուց, կենտրոնական նյարդային համակարգի գերլարվածությունից: Յիպերտոնիայի պատճառով առաջանում են տարատեսակ հիվանդություններ՝ ինֆարկտ, զարկերակային կարծրախտ (սկլերոզ), ուղեղի արյան գեղում, երիկամային հիվանդություններ:

Այրան ճնշումը պետք է չափել համգիստ իրադրությունում, այլապես ցուցանիշները սխալ կլինեն: Որոշ երկրներում արյան ճնշման կանոնավոր և հաճախակի չափումը համարվում է նորմա: Օրինակ՝ ԱՄՆ-ում ճնշումը չափում են ոչ միայն սրտաբանը և թերապևտը, այլև՝ ատամնաբույժը, մաշկագետը: Շատ քաղաքներում գոյություն ունեն փողոցային հատուկ խցիկներ, որտեղ կան արյան ճնշումը չափելու գործիքներ, և դրանցից կարող է օգտվել ցանկացած ոք:

Հիվանդության ախտանիշներն են՝

Գլխացավը, գլխապտույտը, սրտխփոցը, ցավը սրտի շրջանում, տեսողության խախտումները (աչքերի առջև կարող են հայտնվել մանր կետեր), դողը, քրտնարտադրությունը, սրտխառնոցը, թուլությունը, քնկոտությունը, ականջներում խցնոցը, քունքերում և պարանոցում անոթների պուլսացիան, հևոցը: Տարբեր նարդեկանց նոտ կարող են ի հայտ գալ զանազան ախտանիշներ:

Հիվանդության փուլերը երեքն են՝

I ՓՈՎ - ճնշումը կարծ ժամանակով բարձրանում է և ինքնուրուց կարգավորվում:

-7- ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

II փուլ – ճնշումը լինում է անկայուն, դեղերի ազդեցությամբ կարգավորվում է, սակայն նյարդահոգեկան լարվածության պատճառով կրկին բարձրանում է:

III փուլ - Սրտի, երիկամների և ուղեղի անոթներում զարգանում են օրգանական փոփոխություններ:

Գոյություն ունի հիվանդության երեք հիմնական ժև՝

- սրտային
- երիկամային
- ուղեղային

Բարձր ճնշման դեպքում խորհուրդ է տրվում՝

♥ Ոտքերը և ձեռքերը միաժամանակ դնել տաք ջրի մեջ, թողնել 15-20 րոպե:

♥ Ծոծրակին դնել մանանեխի սպեղանի, իսկ եթե պատրաստի չունեք, մանանեխի չոր փոշին տաք ջրի հետ խառնեք, շիլա պատրաստեք, ապա քսեք կտորի վրա ու դրեք ծոծրակին՝ պահելով 5-20 րոպե: Եթե մաշկն զգայուն է, ապա մանանեխի փոշուն խառնեք նույն քանակությամբ ալյուր:

♥ Հարկավոր է սահմանափակել հեղուկների ընդունումը, որովհետև դրանք բարձրացնում են արյան ճնշումը:

♥ Հիպերտոնիկ կրիզով տառապողներին արգելվում է օրական 3-4 գրամից ավելի կերակրի աղ օգտագործել:

♥ Խորհուրդ չի տրվում օգտագործել մեծ քանակությամբ աղ պարունակող պահածոներ (ձկան, լոբու, տարատեսակ թթուների և այլն):

♥ Կտորոր քացախի մեջ թոշել և 5-10 րոպե դնել ոտնաթաթերին:

♥ 2 բաժակ ջերմուկի գազը թողնել դուրս գա, ավելացնել 1 բաժակ մասուն, 1 ճ/զ մեղր, 1 կիտրոնի քերած կեղև, խառնել և խմել օրը երեք անգամ:

♥ Զարկերակին դնել խորդենու տերևն և կապել:

♥ 1 բաժակ մածունին ավելացնել 1 թ/գ մեղր, 1 պտղունց դարշին և խմել:

♥ Կարտոֆիլը լավ լվանալ, կեղևով եփել, առանց կլպելու նույն ջրով պատրաստել և ուտել: Արդյունքի հասնելու համար օրական երկու անգամ ուտել 5-6 միջին չափի կարտոֆիլ: Բուժման կուրսը 25-30 օր է:

♥ 100 գ ընկույզի միջուկը խառնել 60 գ մեղրին, ուտել օրը երեք անգամ: Բուժման կուրսը 45 օր է:

♥ 1 նարնջի կամ կիտրոնի կեղևը քերել, ավելացնել 1 թ/գ մեղր: Ընդունել օրը երեք անգամ՝ ուտելուց առաջ:

♥ 2-ական կիտրոնը և նարինջը կտրատել, կորիզները հանել, ավելացնել 2 ծ/գ մեղր և խառնել: Մեկ օր սենյակային ջերմաստիճանում պահել ապակյա տարայի մեջ, այնուհետև դնել սառնարանը: Ընդունել օրը երեք անգամ 2-3 թ/գ՝ ուտելուց առաջ: Օգտակար է հիպերտոնիայի նախնական փուլում:

♥ 2 բաժակ տրորած հապալասին ավելացնել 3 թ/գ շաքարավագ: Ընդունել օրը մեկ անգամ՝ ուտելուց մեկ ժամ առաջ:

♥ Հապալասն աղալ, ավելացնել մեղր (1:1): Ընդունել օրը երեք անգամ 1-ական ծ/գ՝ ուտելուց 15-20 րոպե առաջ:

♥ 2 բաժակ տրորած հապալասին ավելացնել 1 բաժակ ջուր, 0,5 բաժակ շաքարավագ, եռացնել և խմել:

♥ 4-5 կարտոֆիլը լավ լվանալ, առանց կեղևելու տեղավորել կաթսայի մեջ, ավելացնել 0,5 լ եռման ջուր, 15 րոպե եռացնել (կաթսայի կափարիչը անպատճառ պետք է փակ լինի), ջուրը քամել, հովացնել և խմել օրական 1-2 բաժակ: Կարճ ժամանակից ճնշումը կկարգավորվի:

♥ 0,5 լ կոնյակին ավելացնել 1 սուրճի բաժակ մեղր, 1 սուրճի բաժակ ընկույզի աղացած միջնապատ: Խմել նախաճաշից առաջ՝ 50 գ:

♥ Ծովաբողկի ոչ շատ մեծ արմատը քերել, ավելացնել 1 բաժակ եռացրած և սառեցրած ջուր, 36 ժամ թրմել, քամել: Խառնուրդը լցնել ամուր փակվող ապակյա տարայի մեջ և պահել սառը տեղում: Ընդունել օրը 2-3 անգամ 1-ական ծ/գ՝ ուտելուց մեկ ժամ առաջ: Բուժման կուրսը 2 ամիս է:

-9- ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

♥ Օգտակար են սև թեյը, մասուրով թեյը, ինչպես նաև ալոճենու ծաղիկներից պատրաստված թեյը:

♥ Ամեն առավոտ առանց ծամելու կուլ տված 1 պՃԵղ սխտորը կկարգավորի արյան ճնշումը:

♥ Բարձր ճնշման դեպքում խորհուրդ է տրվում մեղրն ուտել ճաշելուց առաջ, իսկ ցածրի դեպքում՝ ճաշելուց հետո:

♥ Ծատ օգտակար են լոբին, հոնը, սալորը, սալորաչիրը, սխտորը, թարխունը, սամիթը, կիտրոնի հյութը, հնդկածավարը:

♥ Խաղողը, քնջութք, սուրճը հակացուցված են:

♥ Վերցնել հավասար քանակությամբ ալոճենու ծաղիկներ, առյուծագի, աննեռուկ (սցանուա), դեղատնային երիցուկի ծաղիկներ: 1 ճ/զ խառնուրդին ավելացնել 1 բաժակ եռացրած ջուր, թրմել: Խմել օրական 1-3 բաժակ:

♥ Վերցնել 25-ական գրամ ալոճենու ծաղիկներ, կուսածաղկի տերևներ, չաման, 15 գ սազապ, 100 գ կատվախոտի արմատ: 1 բաժակ սառը ջրում 3 ժամ թրմել, 50 րոպե եփել, այնուհետև 15 րոպե թրմել: Սառեցնել, քամել և օրվա ընթացքում կում-կում խմել:

♥ Սխտորի օղեթուրմը կամ սպիրտային թուրմն իշեցնում է արյան բարձր ճնշումը: 0,5 լ օղուն կամ սպիրտին ավելացնել 75 գ մանր կտրատած սխտոր և պահել մութ տեղում: 15 օրից քամել և օգտագործել օրը երկու անգամ 15 կարիլ՝ ուտելուց առաջ: Բուժման կուրսը 15 օր է:

♥ 3 խոշոր գլուխ սխտորը մաքրել, աղալ, ավելացնել 1,25 լ եռացրած ջուր, բերանն ամուր փակել և տաք տեղում 24 ժամ թրմել՝ ժամանակ առ ժամանակ խառնելով այն: Քամել, ընդունել 2-3 անգամ 1-ական ճ/զ՝ ուտելուց կես ժամ առաջ:

♥ 20 գ սխտորը 200 մլ ջրում թրմել: Ընդունել օրը 2-3 անգամ՝ 1-ական թ/զ:

♥ Ամեն օր ուտել կեղևով խորոված կարտոֆիլ:

♥ 1 ճ/զ կտրատած սամիթը մեկ ժամ թողնել 0,5 լ եռման ջրի մեջ, օրական խմել երեք անգամ 0,5 բաժակ՝ ուտելուց առաջ:

♥ Մի պտղունց կիտրոնի աղը դնել լեզվի վրա և մեկ կում ջրով խմել:

♥ 2 գլուխ սխտորը մաքրել, լվանալ, ճզմել, ավելացնել 250 մլ օղի, 12 օր թրմել: Համը բարելավելու համար կարելի է ավելացնել դաղձի թուրմ: Խմել օրը երեք անգամ 20-ական կաթիլ՝ ուտելուց 15 րոպե առաջ: Բուժման կուրսը 3 շաբաթ է:

♥ 1 ճ/գ կարմիր ալոճենու չոր պտուղների վրա ավելացնել 1 քաժակ ջուր և եփել: Տաք տեղում թրմել 2 ժամ, քամել: Ընդունել օրը 3-4 անգամ 1-2 ճ/գ՝ ուտելուց առաջ:

♥ 10 գ կարմիր ալոճենու չոր պտուղների վրա լցնել 100 մլ օղի կամ 40%-անոց սպիրտ, 10 օր թրմել, քամել: Ընդունել օրը երեք անգամ՝ ուտելուց առաջ՝ ստացված թուրմից 30 կաթիլ ջրին խառնելով:

♥ 500 գ կարմիր ալոճենու խակ պտուղները փայտյա հավանգի մեջ տրորել, ավելացնել 100 մլ ջուր, տաքացնել մինչև 40°C և քամել: Ընդունել օրը երեք անգամ 1-ական ճ/գ՝ ուտելուց առաջ:

♥ Կալիումով հարուստ մթերքները՝ կաղամբը, մաղաղանոսը, լոլիկը, վարունգը, գազարը, ընդեղենը, սխտորը, սև հաղարջը, մեղրը, խնձորը, քացախը, կարգավորում են արյան ճնշումը:

♥ 10 գ կատվախոտի արմատը և ընդերացողունը շատ մանր կտրատել, ավելացնել 300 մլ օղի, 15 րոպե եռացնել, սառեցնել: Ընդունել օրը երեք անգամ՝ 0,5-ական քաժակ:

♥ Կատվախոտի արմատները մանրել, դարձնել փոշի: Ընդունել օրը 2-4 անգամ՝ 1-2 գ:

♥ 10 գ կատվախոտի արմատի և ընդերացողունի վրա լցնել 200 մլ եռացրած ջուր: Այդ խառնուրդով կաթսան 30 րոպե պահել գոլորշու վրա, այնուհետև 2 ժամ թրմել: Ընդունել օրը 3-4 անգամ 1-ական ճ/գ:

♥ Բարձր ճնշման դեպքում հիվանդը ցուցանատերը պետք է մտցնի ականջների մեջ այնպես, որ մատների բարձիկներն ուղղված լինեն դեպի վեր: Որոշ ժամանակ անց ճնշումը կիշնի:

♥ Չեռքերը շփել այնքան, մինչև ջերմություն առաջանա: Աջ ձեռքը դնել հիվանդի գլխին, իսկ ձախում պահել որևէ սառը առարկա (օրինակ՝ սառուցով լի շիշ): Մի քանի րոպեից հիվանդի վիճակը կբարելավվի:

ՀՅՈՒԹԱՔՈՒԺՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՊԵՐՏՈՆԻԱՆ

♥ Հապալասի հյութին ավելացնել շաքարավազ (1:1): Ընդունել օրը երեք անգամ 1-ական ճ/գ՝ ուտելուց հետո:

♥ 10 բաժին գազարի հյութին խառնել 3-ական բաժին վարունգի և բազուկի հյութեր: Օրական խմել նվազագույնը 1 լ: Այս խառնուրդը պարունակում է կալիում, կալցիում, նատրիում, ֆոսֆոր, քլոր և բազմաթիվ կարևորագույն միկրոտարրեր:

♥ Օրը երեք անգամ խմել 100 գ թարմ կաղամբի հյութ:

♥ 200-ական մլ գազարի և բազուկի հյութերին ավելացնել 100 գ հապալասի հյութ, 200 գ մեղր, 100 մլ սպիրտ: Լավ խառնել ու մութ տեղում 3 օր թրմել: Ընդունել օրը երեք անգամ 1-ական ճ/գ:

♥ 2 բաժակ բազուկի հյութին ավելացնել 1,5 բաժակ հապալասի հյութ, 1 կիտրոնի հյութ, 200 գ մեղր, 1 բաժակ օղի: Ընդունել օրը երեք անգամ 1-ական ճ/գ՝ ուտելուց մեկ ժամ առաջ:

♥ 1 բաժակ բազուկի հյութին ավելացնել 1 բաժակ մեղր: Ընդունել օրը երեք անգամ 1-ական ճ/գ՝ ուտելուց առաջ: Բուժման կուրսը 3 ամիս է:

♥ 1 բաժակ գազարի կամ բողկի հյութին ավելացնել 1 բաժակ մեղր: Ընդունել օրը երեք անգամ 1-ական ճ/գ՝ ուտելուց առաջ: Բուժման կուրսը 2-3 ամիս է:

♥ 1-ական բաժակ գազարի և ծովաբողկի հյութերին ավելացնել 1 բաժակ մեղր, 1 կիտրոնի հյութ: Ընդունել օրը երեք անգամ 1-2 թ/գ՝ ուտելուց մեկ ժամ առաջ կամ ուտելուց 2-3 ժամ հետո: Հյութերի խառնուրդը լցնել ամուր փակվող ապակյա տարայի մեջ և պահել սառը տեղում: Բուժման կուրսը 2 ամիս է:

♥ 3 կգ մաքրած սոխի հյութը քամել, ավելացնել 500 գ մեղր, 25-30 հատ ընկույզի միջնապատ, 0,5 լ օղի և 10 օր թրմել: Ըսդունել օրը 2-3 անգամ 1-ական ճ/գ:

♥ Օրական խմել 50 գ մաղաղանոսի հյութ կամ էլ՝ մաղաղանոսի և այլ հյութի խառնուրդ:

♥ Օգտակար են բազուկի, հալվեի (ալօէ), հաղարջի հյութերը:

♥ ճնշումը կկարգավորվի, եթե օրական 3-4 անգամ խմեք 0,5 բաժակ գազարի, բազուկի, խնձորի, կաղամբի, կարտոֆիլի հյութերի խառնուրդ: Բազուկի հյութը պետք է 1 ժամ պահել սառնարանում, այնուհետև խառնել մյուս հյութերին:

♥ Խաղողի հյութն իջեցնում է արյան բարձր ճնշումը: Բուժման կուրսը 50 օր է: Բուժման առաջին շաբաթվա ընթացքուն ճնշումը կիշնի, իսկ կուրսն ավարտելուց հետո հնարավոր է, որ հիվանդը լիովին ապաքինվի: Հարկավոր է օրը երկու անգամ՝ ուտելուց 1 ժամ առաջ, խմել խաղողի թարմ հյութ: Հյութի քանակն աստիճանաբար պետք է ավելացնել հետևյալ գրաֆիկով՝ առաջին, երկրորդ, երրորդ օրերին խմել 50-ական, չորրորդ, իհնգերորդ, վեցերորդ օրերին՝ 100-ական, յոթերորդ, ութերորդ, իհներորդ օրերին՝ 150-ական, տասներորդ, տասնմեկերորդ օրերին՝ 200-ական, տասներկուերորդ օրը՝ 250-ական գրամ հյութ: Հաջորդ տասներեք օրերի ընթացքուն խմել օրը 250-ական գրամ: Մյուս քսանիհնագ օրերին հյութը խմել վերը նշված գրաֆիկի հակառակ հերթականությամբ՝ աստիճանաբար նվազեցնելով հյութի քանակը: Այս բուժումը հակացուցված է մշտապես բարձր ճնշում ունեցողներին և այն մարդկանց, ովքեր տառապում են ճարպակալմամբ, շաքարային դիաբետով, երիկամային անբավարարությամբ, ստամոքսի և տասներկումատնյա աղիքի խոցային հիվանդություններով:

ՀՐԱԾԱ ԳՈՐԾ ԱՍՊԻՐԻՆԸ



Ասպիրինն օգտակար է ոչ միայն սրտի համար, այլև նրա գործածությունը մարդուն կարող է պաշտպանել ուղեղի կաթվածից և մի շաբթ այլ հիվանդություններից: Դան Ֆասթերը թենիս խաղալիս սաստիկ ցավ զգաց կրծքավանդակում: Նա բժիշկ էր, ուստի անմիջապես հասկացավ, թե ինչ կատարվեց իր հետ: Ֆասթերը նստեց՝ մտորելով այն մասին, թե ինչից կարող էր առաջանալ այդ ցավը: Ընկերոջ օգնությամբ նա տեղափոխվեց հիվանդանոց և ենթարկվեց բժշկական զննության, որից պարզ դարձավ, որ Ֆասթերը սրտի կաթված է ստացել: Արյունը նրա երակներում իր բնականոն ընթացքն էր ստացել, միայն մի փոքր վնասվել էր սիրտը: Այդ երևույթը զարմանք պատճառեց բժիշկներին, սակայն Դանը հիշեց, որ նախքան թենիս խաղալը կոկորդացավի կասեցման համար ասպիրինի երկու հար էր ընդունել, որի շնորհիվ էլ կանխվել էր սրտի ծանր կաթվածը: Այդ դեպքից հետո նա օրական ընդունում էր ասպիրինի մեկ դեղահաբ:

Սրտի կաթված ստացած մարդկանցից շատերն արդեն սովորություն են դարձրել քիչ քանակությամբ ասպիրինի գործածությունը, որը նրանց ապահովագրում է շատ ծանր հիվանդություններից:

Ք. ծ .ա. 5-րդ դարում հոլյու բժիշկները՝ Արևմուտքի բժշկության նախահայրերը, հիվանդի ցավերը վերացնելու համար քինաքինայի ծառի կեղևից պատրաստված դեղեր էին տալիս, որոնք ասպիրինի բնական դեղանյութ էին պարունակում: 1763 թ.

Անգլիայում հրապարակված մի վիճակագրության մեջ նշված էր, որ բժիշկ Անտոնը հիսուն հիվանդների ջերմությունն իջեցրել էր՝ չորացրած քինաքինայի փոշի խնեցնելով: 1853 թ. ֆրանսիացի քիմիկոս Չարլզ Գերիարդի միջոցով արհեստական եղանակով արտադրվեց սալիսիլիկ թթուն (այն քինաքինա դեղանյութի բաղադրությունից է), որն այսօր ասպիրին է կոչվում: Այն շատ կարծ ժամանակով արժանացավ մասնագետների ուշադրությանը, ապա մոռացության մատնվեց:

1899 թ. «Բայեր» դեղարդյունաբերական ձեռնարկությունն աշխարհին ներկայացրեց ասպիրինը: Այդ դեղամիջոցը նպաստում է սրտի երակների հիվանդության բուժմանը՝ հակազդելով երակներում առաջացող արյան լերդացմանը, որի պատճառով էլ ի հայտ է գալիս սրտի կաթվածը: 1971 թ. անգլիացի ականավոր գիտնական Ջոն Վենը հայտարարեց, որ ասպիրինը պակասեցնում է արյան թանձրությունը և վերացնում է նրա լերդացման վտանգը: Այս կարևոր հայտնագործության համար գիտնականը 1982 թ. արժանացավ Նոբելյան մրցանակի:

Չնայած ասպիրինը ողջ աշխարհում ընդունված դեղ է, սակայն այն ունի նաև վնասակար հատկություններ: Որոշ դեպքերում նրա գործածությունը կարող է անդառնալի վնասներ պատճառել մարդուն, առաջացնել ստամոքսի խանգարումներ, տևական արյունահոսության պատճառ դառնալ:

ԶԹԻ ԱՐՅՈՒՆԱՀՈՍՈՒԹՅՈՒՆ

Մեխանիկական վճասվածքների, կոտրվածքների և մի շարք այլ հիվանդությունների (հիպերտոնիա, անեմիա, հեմոֆիլիա, լեյկոզ, գլոմեռուլոնեֆրիտ, սրտային անբավարարություն, լյարդի ցիրոզ և այլն) դեպքում կարող է լինել քրի արյունահոսություն:

Գրեթե բոլոր վարակիչ հիվանդությունները ևս կարող են ունեցվել քրի արյունահոսությամբ: Այդ դեպքում անհրաժեշտ է անհապաղ դիմել բժշկին՝ պարզելու համար արյունահոսության պատճառը:

Քրի արյունահոսությունը կանխելու միջոցներն են՝

❖ Յարկավոր է մի քանի բոպե մատներով սեղմել քրի կողքերից: Եթե շարունակի արյունահոսել, քթանցքի մեջ բամբակե գնդիկ մտցնել, որը նախապես պետք է թրչել ջրածնի պերօքսիդով: Քրին և ճակատին սառույց դնել:

❖ Բամբակե գնդիկը թաթախել հարբուխի ժամանակ օգտագործվող քթային կաթիլների մեջ և այն տեղադրել քթանցքում կամ էլ 3-5 կաթիլ կաթեցնել քթանցքի մեջ: Եթե սա էլ չօգնի, վերցնել 20-30 սմ երկարությամբ և 1-1,5 սմ լայնությամբ վիրակապ, թրչել որևէ բուսական յուղի (արևածաղկի, ձիթապտղի) կամ էնուլսիայի (ստրեպտոցիդ, ստրեպտոմիցին և այլն) մեջ ու որևէ հարմար իրի միջոցով վիրակապը շերտ առ շերտ մտցնել քթանցքի մեջ՝ սեղմելով դեպի քրի խոռոչի ետին մասը:

❖ Մանկական փուչիկը կամ էլաստիկ վիրաբուժական ձեռնոցը լավ լվանալ, մտցնել քթանցքի մեջ, փչել և որոշ ժամանակ պահել այնտեղ:

❖ Երկարե բանալին բրդյա թելով ծոծրակից կախել այնպես, որ այն լինի մեջքին՝ թիակների միջև: Սա արյունահոսությունը դադարեցնելու լավագույն միջոցներից է:

❖ Գլուխսն ուղիղ պահել, հանգիստ մնալ, քթով ներքաշել սառ ջուր, որի մեջ պետք է լուծված լինի մի քիչ շիթ կամ քացախ: Դրանից հետո ուռնգերը մատներով սեղմել և մեկ կամ երկու ռունգը բամբակ մտցնել:

❖ Եղինջի ծեծած տերևը դնել քթին, արյունահոսությունը կդադարի:

❖ Դեռևս 15-րդ դարում քթի արյունահոսությունը կանխելու համար օգտագործել են հազարաթերթիկի հյութը և եփուկը: Ավելի ուշ այն սկսեցին օգտագործել նաև ներքին (հատկապես՝ արգանդային) արյունահոսությունը դադարեցնելու նպատակով:

❖ Արյունահոսության դեպքում քթի մեջ կաթեցնել մի քանի կաթիլ աղավնու արյուն:

❖ Սև վայրի բալի տերևները մանրել, լցնել քթանցքի մեջ: Այն կանխում է արյունահոսությունը:

❖ Քթի հաճախակի արյունահոսություն ունեցողներին խորհուրդ է տրվում շատ օգտագործել կիտրոնի հյութ, հավի միս:

❖ Զվի կեղևն այրել, մոխիր դարձնել, քթանցքը լցնել:

ԶԵՐՄՈՒԹՅՈՒՆ

❖ 1 ճ/գ երիցուկը 0,5 բաժակ եռացրած ջրում մի քանի րոպե թրմել, քամել, ավելացնել 0,5 բաժակ օղի և թրջոցներ դնել թևերի ծալման կետերում՝ զարկերակների վրա:

❖ Գուլպաները թրջել օղիով կամ քացախով և հագնել: Վրայից կրել բրդյա գուլպաներ: Քացախով թրջոցը կարելի է դնել նաև մարմնի տարբեր մասերին:

❖ Կիտրոնի հյութը քամել և ջրով խմել:

❖ Նշի կորիզների կեղևից եփուկ պատրաստել ու խմել:

❖ Մոշի տերևներից և արմատներից եփուկ պատրաստել ու խմել:

❖ Ազնվամորու թարմ հյութն իջեցնում է ջերմությունը:

❖ Խմել թարմ կամ չորացրած մորու կամ ազնվամորու եփուկ:

❖ Հաղարջի տերևներից թեյ պատրաստել և խմել: Այն ունի քրտնեցնող հատկություն:

❖ Ըստ հույն բժիշկների, վարունգն ունի ջերմիջեցնող հատկություն:

❖ Գարին խոշոր աղալ, ավելացնել ջուր (1:15), եփել այնքան, մինչև մնա մեկ բաժին: Վրան աղ անել և ուտել:

❖ Ծորենին (բարբարս), սեխը, խակ խաղողի՝ ազդիսի հյութն իջեցնում են ջերմությունը:

❖ Խմել կաղամբի թթվածուր:

❖ Ծիրանն իջեցնում է ջերմությունը, իսկ նրա չրից պատրաստված եփուկն օգտակար է սուր ջերմերի դեպքում:

❖ Երեխաներին խորհուրդ է տրվում խմել չորացրած բալի եփուկ: 100 գ բալի վրա լցնել 0,5 լ ջուր, կաթսան կափարիչով ծածկել և մարմանդ կրակով եփել:

❖ Ուտել կարմիր հաղարջ կամ էլ ընպել նրա հյութը:

ՔՐՈՆԽԻՏ

Բրոնխիտը բրոնխների բորբոքումն է, որն առաջանում է մրսածության, գերսառեցման հետևանքով:

Այն լինում է սուր և խրոնիկական: Սուր բրոնխիտի ժամանակ բրոնխների լրողաբաղանքն այտուցվում է, արտադրվում է լորձ, որն սկզբում կարող է լինել շճային, իսկ հետո՝ շճաբարախային բնույթի: Խրոնիկականն առաջանում է սուր բրոնխիտի ոչ լրիվ բուժման հետևանքով:

Գանգատները՝ լինում է հազ (սկզբում՝ չոր, հետո՝ թաց), հարբուխ, բարձր ջերմություն, թուլություն, ցավ կրծքավանդակի շրջանում:

Բրոնխիտի դեպքում խորհուրդ է տրվում՝

✿ Եմալապատ կաթսայի մեջ լցնել 1 բաժակ կաթ, 1 ծ/գ եղեսպակ, եփել թույլ կրակի վրա՝ բերանը փակ վիճակում: Սառեցնել, քամել, նորից եռացնել: Խմել տաք վիճակում՝ քնելուց առաջ: Դառը համը մեղմելու համար կարելի է մեղր ավելացնել: Բուժման տևողությունը 1-3 ամիս է՝ կախված հիվանդի վիճակից: Սա լայնորեն կիրառվում է սերբ գյուղացիների շրջանում:

✿ 1 լ եռացրած ջրի մեջ լցնել 400 գ թեփ (ցանկացած տեսակի), թողնել սառչի: Քամել և չափազանց տաք վիճակում խմել օրվա ընթացքում: Համը լավացնելու համար կարելի է ավելացնել բոված շաքար (մեղր, շաքարավազ, սպիտակ շաքար չի կարելի): Սերբերը և մակեդոնացիներն այն քաղցրացնում են կարտոֆիլի շաքարով: Եփուկն օգտակար է նաև այն դեպքում, եթե ծայնը խզված է:

-19- ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

❖ 2 ճ/գ թարմ սերուցքային կարագը, 2 ձվի դեղնուցը, 1 թ/գ այսուրը, 2 թ/գ մեղրը լավ հարել և ընդունել օրը 4-5 անգամ՝ ուտելուց առաջ:

❖ Եմալապատ կաթսայի մեջ լցնել 1 լ եռացրած ջուր, 1 ճ/գ եզան լեզու, այն թույլ կրակի վրա 10 րոպե եփել: Թողնել 24 ժամ՝ կաթսան փաթաթելով տաք ծածկոցով: Քամել և ընդունել օրը երեք անգամ՝ ճաշելուց 15-20 րոպե առաջ:

❖ Եմալապատ կաթսայի մեջ լցնել 1 բաժակ կաթ, 1 ճ/գ մանր կտրատած իսլանդական մամուռ: Եփել՝ կաթսան ծածկելով ափսեով (մետաղյա կափարիչով ծածկելը խստիվ արգելվում է): Երբ խառնուրդը եռա, քամել, կաթը նորից տաքացնել՝ ափսեով ծածկելով: Խմել քնելուց առաջ՝ շատ տաք վիճակում և խուսափել միջանցիկ քամուց: Սա ռուսական ժողովրդական հայտնի միջոց է:

❖ Բողկը քերել, թանգիֆով քամել: 1 լ բողկի հյութին ավելացնել 400 գ հեղուկ մեղր: Ընդել 2-ական ճ/գ ուտելուց առաջ և երեկոյան՝ մինչև քնելը:

❖ Բողկը մանր կտրատել, դմել կաթսայի մեջ, վրան շաքար-ավազ ավելացնել, 2 ժամ ջեռոցում եփել, քամել, հեղուկը լցնել շշի մեջ: Ընդունել օրը 3-4 անգամ 2 թ/գ՝ ուտելուց և քնելուց առաջ:

❖ Խոզի փորոտիքի ճարար լցնել կաթսայի մեջ, թույլ կրակի վրա հալել, խմել չափազանց տաք վիճակում: Ընդունել օրը երկու անգամ՝ 1-ական բաժակ, առավոտյան՝ ուտելուց 1 ժամ առաջ և երեկոյան՝ քնելուց առաջ:

❖ Եռացրած ջրի մեջ լցնել 1 ճ/գ իսլանդական մամուռ, թեյի նման թրմել, ավելացնել մեղր: Քնելուց առաջ խմել 1 բաժակ՝ չափազանց տաք վիճակում: Բուժման տևողությունը 1-3 ամիս է: Ժողովրդական այս միջոցը հարգի է սերբ գյուղացիների շրջանում:

❖ Ազնվամորու տերևների եփուկը շատ օգտակար է բրոնխիտի և թոքային այլ հիվանդությունների բուժման համար:

❖ Սերկակիլի կորիզների վրա լցնել եռացրած ջուր, որոշ ժամանակ թողնել, մինչև լորձը դուրս տա և խմել:

❖ Խոզի աղիքների ճարպը դնել կաթսայի մեջ, եփել մարմանդ կրակով կամ էլ դնել ոչ շատ թեժ ջեղոցը: Այնուհետև հալած ճարպը լցնել ուրիշ ամանի մեջ, թողնել սարչի: 1 թ/գ ճարպը լցնել 1 բաժակ կաթի մեջ և խմել: Ժողովրդական այս հրաշագործ միջոցն առաջարկվում է խրոնիկական բրոնխիտի դեպքում:

❖ 10-15 օր տևող խաղողային մոնոդիետան, որի ժամանակ հարկավոր է սնվել միայն խաղողով, շատ օգտակար է խրոնիկական բրոնխիտի ժամանակ:

❖ 0,5 լ գինու մեջ լցնել հալվեի 4 հատ մեծ տերև, թողնել 4 օր: Ընդունել օրը երեք անգամ՝ 1-ական թ/գ: Օգտակար է խրոնիկական բրոնխիտի դեպքում:

❖ 0,5 կգ սոխը մաքրել, լվանալ, մանր կտրատել, վրան ավելացնել 50 գ մեղր և 400 գ շաքարավագ: Ստացված զանգվածը 1 լ ջրում 3 ժամ եփել: Ընդունել օրը 4-5 անգամ՝ 1-ական ճ/գ:

❖ Խոզի աղիքների ճարպը, որը ցանցի տեսք ունի, խառնել բևեկնախեժի հետ, ապա քսել կրծքավանդակին՝ մերսելով այնքան, մինչև քսուքը ներծծվի ու մաշկը չորանա:

ԱՏԱՄՆԱՑԱՎ

Ատամնացավն առաջանում է ատամի մեջ ընթացող մի շարք գործընթացների (կարիես, պուլայիտ, պերիոդոնտիտ) և հիվանդագին վիճակների (պարոդոնտոզ, պերիօստիտ, օստեոմիելիտ) ժամանակ: Ցավը կարող է ճառագայթել դեպի քներակը, ականջը, աչքը:

Ատամնացավի դեպքում խորհուրդ է տրվում՝

❖ Եղեսպակի (առլֆեյ) եփուկով ողողել ցավող ատամը՝ ձգտելով այն հնարավորինս երկար պահել բերանում: Սառած եփուկը փոխարինել նորով: Մի քանի անգամ կրկնելուց հետո ցավը կանցնի:

❖ Վերցնել մի կտոր խոզի ճարպ (եթե աղի է, աղը մաքրել), դնել հիվանդ տեղին՝ լնոյի և այսի միջև: Բերանում պահել 15-20 րոպե: Այդ ընթացքում ցավը կմեղմանա:

❖ Աչ կողմի ատամը ցավելիս՝ աջ, իսկ ձախս կողմինը ցավելիս՝ ձախս ականջի մեջ դնել եզան լեզվի արմատիկ և պահել այնքան, մինչև ցավն անցնի:

❖ Վերցնել 15 գ զմուռս, լուծել 60 գ գինու սպիրտի մեջ, ավելացնել 15 գ գրալախոտ, 15 գ մորու տերևներ, 15 գ խոլորձի տերևներ, 15 գ դաղձի տերևներ, 30 գ գինու քացախ: Այդ ամենը լցնել ապակյա տարայի մեջ՝ թողնելով երեք օր: Թուրմը քանել, օգտագործել բերանի խոռոչի ողողման համար (ողողել գոլ թուրմով), իսկ ատամնացավի ժամանակ հիվանդ ատամի վրա մի կում տաք թուրմ պահել:

❖ Սիրիորում բնակվող մոլոկաններն ատամնացավը բուժում են բավականին տարօրինակ եղանակով: Դաստակի ներսի կողմից սխտոր են քսում և մերսում, այնուհետև, կտրատելով սխտորը, դնում են զարկերակին և վիրակապով չափազանց ամուր

կապում են ձեռքը: Եթե աջ կողմի ատամն է ցավում, սխտորը կապվում է ձախ ձեռքի զարկերակին և՝ հակառակը: Սխտորը դնելուց առաջ դաստակը հարկավոր է ծածկել կտորով:

❖ 1 սուրճի բաժակ գոլ ջրին ավելացնել 1 թ/գ աղ, լուծույթով ողողել ցավող ատամը՝ հնարավորինս երկար պահելով բերանում: Կրկնել այնքան, մինչև լուծույթը վերջանա: 10-15 րոպե անց ցավը կանցնի:

- ❖ Մանամեխն ու ընկույզը գինով եփել և ողողել բերանը:
- ❖ Թթենու տերևներից խյուս եփել և դնել ցավող ատամի վրա:
- ❖ Եղինջը եփել, լցնել նեղ բերանով բաժակի մեջ, բերանը պահել գոլորշու վրա:
- ❖ Չամիչը պետք է երկար ժամանակ ծամել և կուլ տալ:
- ❖ Ըստ Ամիրողովլարի, նարնջի յուղը շատ օգտակար է ատամնացավի դեպքում:
- ❖ Ատամնացավի հետևանքով առաջացած լնդաբորիի, թարախակալման և ուռուցքի դեպքում էմալապատ կաթսայի մեջ 0,5 սմ բարձրությամբ լցնել լորենու հեղուկ մեղր, վերցնել հին ու ժանգոտ մեխն, կրակի վրա շիկացնել և դնել մեղրի մեջ: Մեխի շուրջը գոյացած կուպրաննան թանձը սև նյութը քնելուց առաջ քսել լնդին: Ուռուցքը շուտով կծեղքվի, թարախը կնաքրվի:
- ❖ Ծնեբեկի արմատից եփուկ պատրաստել և ողողումներ կատարել:

❖ Պարողոնտողի հետևանքով առաջացած ատամնացավի ժամանակ ատամների արանքը նաքրել ուտելիքի մնացորդներից և բերանը ողողել կալիումի պերմանգանատի թույլ լուծույթով:

❖ Կարիեսի և պուլպիտի հետևանքով առաջացած ցավի դեպքում կարիոզ խոռոչը մաքրել ուտելիքի մնացորդից, բամբակը թրցել մաքրուր սպիրտով, օղիով կամ կոնյակով ու դնել դրա մեջ: Եթե ցավը չմեղմանա, ժամանակ առ ժամանակ բերանում պահել սառը ջուր կամ սառույց:

- ❖ Ավելուկը գինու հետ եփել, ողողել ցավող ատամը:
- ❖ Ցավը կմեղմանա, եթե բերանը ողողեք դանձլամերի և քացախի եփուկով կամ էլ լնդերը մերսեք դանձլամերի փոշիով:

ՔԵՐԱՆԻ «ԶԱՐԴԸ»



Ատամների բացակայությունը ոչ միայն փշացնում է ժպիտը, ծերացնում մարդուն, այլև վկայում է «փնթիության» մասին: Նա, ով ունի առողջ և ճիշտ դասավորված ատամնաշար, միշտ էլ երիտասարդ է և համայիչ: Այնպես որ ատամները պետք է խնամել ոչ միայն առողջության, այլ նաև՝ գեղեցկության համար:

Կա այսպիսի ասացվածք. «Ատամներն առավոտյան մաքրիր գեղեցկության, իսկ երեկոյան՝ առողջության համար»: Ատամների վիճակն ազդում է անբողջ օրգանիզմի վրա: Դա հայտնի է նույնիսկ նրանց, ովքեր բժշկության մասին ունեն աղոտ պատկերացում: Չարժե մանրամասն խոսել նույնիսկ այն տպավորության մասին, որը թողնում է դեղնանիկոտինային, ծակծկված, ատամնաքարերով պատված ատամները ցուցադրող մարդը:

Որպեսզի ատամները չվնասվեն, անհրաժեշտ է բերանի խոռոչը պահել իդեալական մաքրու վիճակում, իսկ հիգիենայի պահպանման ամենահայտնի միջոցն ատամի խոզանակն է: Մաքրել ատամները, չի նշանակում խոզանակը մի քանի անգամ տանել-բերել դրանց վրայով: Ատամները պետք է մաքրել մանրակրկիտ ձևով: Խոզանակի շարժումները պիտի լինեն վերևից ներքև և՝ լնդերից դեպի ատամները: Այդ ժամանակ լնդերը մերսվում են՝ լավացնելով արյան շրջանառությունը: Լավ խոզանակը պետք է լինի բավականաչափ փափուկ՝ ատամների էնալը չվնասելու համար, բայց միևնույն ժամանակ՝ նաև կոշտ, որպեսզի սննդի մնացորդները մաքրվեն ատամների ճեղքերից,

հակառակ պարագայում պարարտ հող կստեղծվի մանրէների համար:

Չնայած գովազդային մեծ ալիքին, ատամի մածուկը մաքրելու միակ միջոցը չէ: Ատամները լվանալու համար կարելի է օգտագործել կերակրի աղ՝ այն ցանելով խոզանակին: Աղը ոչ միայն լավ մաքրում է, այլև լավացնում է լնդերի արյան շրջանառությունը՝ ուժեղացնելով թքարտադրությունը:

Ատամների լավ վիճակն ապահովող կարևոր պայման է ծամելը: Անհրաժեշտ է ուտել կոշտ ուտելիք և այն լավ ծամել: Մաստակ ծամելը թեև այնքան էլ գեղեցիկ չէ, սակայն օգտակար է ատամների համար. մարզում է ծամողական ապարատը, մերսում թերախի լորձաթաղանթը և նպաստում ատամների մեխանիկական մաքրմանը:

Ամենօրյա կյանքում հարկ է խուսափել այնպիսի բաներից, որոնք կարող են քայքայել ատամի էմալը: Այդպիսի վատ սովորություններից են ատամով ընկույզ, կորիզ կոտրելը, թել կտրելը, լուցկու հատիկ կրծոտելը:

Լուրջ վտանգի են ենթարկվում հատկապես ծխողների ատամները: Դրանք լինում են դեղին, ատամնաքարերով պատված: Ծխողները քնելուց առաջ անպայման պիտի լվանան ատամները և այլևս չծխեն, իսկ եթե լվանալու հնարավորություն չունեն, ապա խորհուրդ է տրվում խնձոր ուտել:

Քնելուց առաջ քաղցրեղենի օգտագործումը կարող է բացասաբար անդրադառնալ ատամների վրա, քանի որ քաղցրավենիքը նպաստում է կարիեսային մանրէների բազմացմանը: Փոխարենը կարելի է մի կտոր պանիր ուտել. այն բարձրացնում է թերախի խոռոչի թթվայնությունը՝ պաշտպանելով ատամները:

Զվի կեղեկը, որը պարունակում է մեծ քանակությամբ միկրոտարրեր՝ պղինձ, ֆտոր, երկաթ, ֆոսֆոր, ցինկ և այլն, օգտակար է ատամների համար. այն պաշտպանում է կարիեսից: Պետք է թարմ ձուռ լավ լվանալ, խաշել, կեղևի թաղանթը մաքրել, բողնել մի քանի ժամ չորանա, այնուհետև փոշի դարձնել ու խմել:



ՕԳՏԱԿԱՐ Է ԻՄԱՆԱԼ



*Ատամների և լճերի ամրացնան համար օգտակար է ձիթապտղի ջուրը, որով հարկավոր է ողողումներ կատարել:

*Կանաչ ընկույզի քամած հյութին ավելացնել խաղողի հյութ, եփել մինչև թանձրանալը և դրանով ողողել բերանը: Այն ամրացնում է շարժվող ատամները:

*Արմավի կորիզն այրել, փոշի դարձնել, քսել ատամներին: Այն ամրացնում է ատամները:

*Ատամներն սպիտակեցնելու և ամրացնելու համար դարձնը խառնել մեղրին և քսել շարժվող ատամին:

*Խմել թարմ կաղամբի հյութ. այն պաշտպանում է էնալը:

*Որպեսզի ատամներն ամրանան, սպիտակեն, գարին այրել, փոշի դարձնել, աղ խառնել և դրանով լվանալ ատամները:

*Ատամները կամրանան, կրառնան սպիտակ և փայլուն, եթե լվանաք խոզի ոսկորի մոխիրով:

*Ատամներն սպիտակեցնելու համար 2-3 ամիսը մեկ կիրառեք հետևյալ քառորդ՝ 5 կարիլ 3 %-ոց գեղօքսիդին (պերեկու) ավելացնել մի պտղունց աղ և սոդա, ապա ստացված խառնուրդը քսել ատամներին:

*Ըստ Ամիրովվաթ Ամասիացու, դրումը փայլեցնում է ատամները, իսկ կծոխուրի արմատի կեղևը դրանք ամրացնում է:

*Վարունգի, բազուկի և գազարի հյութերի խառնուրդը նպաստում է ատամների հիվանդությունների բուժմանը:

*Եթե ամեն երեկո մի պճեղ սխտոր ծամեք, ապա ողջ կյանքում կունենաք ճերմակ ատամներ, իսկ սխտորի տիած հոտը կանցնի, եթե մաղաղանոս կամ էլ մի շերտ կիտրոն ուտեք:

*Ատամները չեն փչանա, եթե ամեն առավոտ դրանք մաքրեք կիտրոնի հյութով: Դրա համար հարկավոր է խոզանակը ջրով թրջել և վրան մի քանի կարիլ կիտրոնի հյութ կարեցնել:

ԱՏԱՄ ՔԱՅՔԱՅՈՂ

Հետազոտելով մարդկային մարմնի տարբեր օրգանները՝ գիտնականները նրանցում հայտնաբերել են ֆտոր: Այն առկա է ուղեղում, թոքերում, լյարդում, երիկամներում, մկաններում, մազերում: Ամենից շատ պարունակվում է ատամների և ոսկորների մեջ, առանց որի վերջիններս չեն կարող կանոնավոր զարգանալ: Ֆտորը գոյություն ունի ամենուրեք՝ լեռնային ապարներում, հողում, ջրում, մթնոլորտում: Այն մարդու և կենդանիների օրգանիզմ է մտնում ջրի և սննդամթերքի միջոցով: Եթե խնելու ջուրն ավելի քիչ է ֆտոր պարունակում, քան անհրաժեշտ է օրգանիզմին առողջ լինելու համար, ապա մարդու և կենդանիների ատամներն սկսվում են քայքայվել: Դիվանդությունը կանխելու համար հարկավոր է ամեն օր խնելու ջրին ավելացնել 1 միլիգրամ ֆտոր: Ատամները կարող են քայքայվել նաև այն դեպքում, եթե օրգանիզմը չափից ավելի ֆտոր է պարունակում:

Մեծահասակների համար ֆտորի օրական չափաբժինը կազմում է 8-10 միլիգրամ, իսկ եթե ջրի ու սննդի հետ օրգանիզմը չափից ավելի ֆտոր է ստանում, այն հիվանդանում է ֆլուորոզով, որի հետևանքով ատամները քայքայվում են՝ դառնալով դյուրաբեկ, փշրություն են, էմալը ծածկվում է մանր բծերով, ատամները մաշվում են մինչև բուճ լինելը, երբեմն էլ էմալի մակերեսին ի հայտ են գալիս կավճագույն աղոտ բծեր կամ էլ՝ ճերմակավուն նրբազժեր: Որոշ դեպքերում էլ կենտրոնական և կողմնային կտրիչները պատվում են բաց դեղնավուն բծերով:

Ֆտորը կարող է լինել և' մեր բարեկամը, և' մեր թշնամին: Նրա պակասությունն ու ավելցուկը մեծ ազդեցություն են գործում օրգանիզմում տեղի ունեցող կարևոր կենսական գործընթացների վրա, ուստի պետք է հետևել, որ այն միշտ լինի չափի սահմաններում:

ԾՆՉԱՌՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Մարդու և բարձրագույն տիպի կենդանիների արյան մեջ պարունակվում է մի օրգանական նյութ, որը կոչվում է հեմոգլոբին: Արյան կարմիր գնդիկները նրան են պարտական իրենց գույնով:

Ներշնչելիս մենք ստանում ենք թթվածին, իսկ արտաշնչելիս արտադրում ենք ածխաթթու գազ: Ծնչառության այդ գործընթացը կատարվում է արյան միջոցով, որը թթվածինը թոքերից հասցնում է մարմնի բոլոր անկյունները:

Արյունը չէր կարող թթվածնի ատոմների լավ փոխադրիչ լինել, եթե հեմոգլոբին չպարունակեր, առանց որի մենք չենք կարող շնչել, շարժվել, աշխատել: Արյան մեջ այդ նյութի պակասությունը խախտում է օրգանիզմի կանոնավոր գործունեությունը: Որպեսզի արյան մեջ հեմոգլոբինը միշտ շատ լինի, մեզ անհրաժեշտ են կորալտ, պղինձ, երկաթ, մանգան: Եթե դրանք չկիրառենք մեր սննդի մեջ, արյան կարմիր գնդիկները կքչանան, ու կսկսվի շատ ծանր հիվանդություն՝ սակավարյունություն: Ենիշտ սնունդն ավելացնում է հեմոգլոբինը, հետևաբար հարկավոր է շատ օգտագործել վիտամին C պարունակող սննդամթերք:

ՀԵՄՈԳԼՈԲԻՆԻ ՔԱՆԱԿԸ ԿԱՎԵԼԱՆԱ, ԵԹԵ ԿԻՐԱՌԵՔ ԱՇՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ՝

❖ Առավոտյան անորի վիճակում խմել 1 բաժակ մասուրի հյութ, որին պետք է ավելացնել կես կիտրոնի հյութ և 1 թ/զ մեղր:

❖ Նախաճաշին ուտել 1-2 ճ/զ ծլեցրած ցորեն, որին հարկա-

վոր է ավելացնել մեղր, չամիչ կամ ծիրանի չիր: Ծլեցնելու համար ցորենը լցնել ապակյա տարայի մեջ, լվանալ, ավելացնել այնքան ջուր, որ այն ցորենից 2-3 մատ բարձր լինի: Տարան կափարիչով ծածկել, թողնել 12 ժամ, այնուհետև ջրքամել և 12 ժամ թողնել բերանը բաց վիճակում: 2-3 օրից ցորենը կծլի, որից հետո այն պետք է պահել սառնարանում:

❖ Յուրաքանչյուր 40 րոպեն մեկ փոքր կումերով խմել 1/4 բաժակ ջուր:

❖ Ամեն առավոտ ուտել 3-4 ճ/գ պահածոյացված կամ թարմ ոլոր:

❖ Արյունը թարմացնելու, հեմոգլոբինի քանակը բարձրացնելու համար մեկ ամիս շարունակ պետք է խմել կովի թարմ կաթ և ուտել անտառային ազնվամորի:

❖ Ծիրանը շատ օգտակար է. այն բարձրացնում է հեմոգլոբինի քանակը:

❖ Արյան կարմիր գնդիկները կավելանան, եթե խմեք սպանախի և գազարի հյութերի խառնուրդ:

❖ Շատ օգտակար է վարունգի և գազարի հյութերի խառնուրդը:

❖ 1/3 բաժակ բազուկի հյութին ավելացնել այնքան խնձորի հյութ, որ դառնա 1 բաժակ և խմել: Յյութերի այս խառնուրդն ընդունել մեկ շաբաթ անընդմեջ:

❖ 100 գ գազարի հյութին ավելացնել 30 գ վարունգի և 30 գ բազուկի հյութ ու խմել:

❖ Արյան կարմիր գնդիկները կավելանան, եթե հաճախ օգտագործեք սպանախ:

ՍԱԿԱՎԱՐՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Արյան մեջ կարմիր գնդիկների պակասի դեպքում առաջանում է ծանր հիվանդություն՝ սակավարյունություն (անեմիա): Այն երբեմն շատ սուր ձևով է դրսորվում՝ վերածվելով չարորակ սակավարյունության: Դիվանդը կամաց-կամաց հյուծվում է, արյան մեջ շարունակ նվազում է հեմոգլոբինի պարունակությունը: Դիվանդությունը շատ հաճախ մահացու ելք է ունենում: Սակավարյունությունն ավելի հեշտ է կանխել, քան` բուժել:

Երկար ժամանակ բժշկությունն անզոր էր այս ծանր հիվանդության դեմ մղվող պայքարում: B_{12} վիտամինի հայտնագործումը հնարավորություն տվեց կասեցնել այս չարաբաստիկ հիվանդությունը: B_{12} -ի բաղադրության մեջ պարունակվում է 4% կորալտ: Այդ պատրաստուկի 1 գրամի միջիններորդական մասը կանխում է անեմիայի հետագա զարգացումը, իսկ ավելի մեծ չափաբաժնի դեպքում այն վերամում է:

B_{12} վիտամինը բացառիկ նշանակություն ունի մարդու և կենդանիների օրգանիզմների համար: Գիտնականներից ոմանք գտնում են, որ առանց B_{12} -ի արյան գոյացումն անհնարին կլիներ, քանի որ այն մտնում է արյան յուրաքանչյուր կարմիր գնդիկի բաղադրության մեջ:

Գանգատները՝ լինում է գլխապտույտ, հևոց, աղմուկ ականջներում, սրտի ռիթմը խանգարվում է, մազերը փշրվում են, թափվում, եղրւնգները՝ շերտավորվում, կոտրատվում, մաշկը դառնում է չոր, գունատ, բերանի անկյուններում հայտնվում են ճաքեր, խախտվում է համի զգայարանը:

Սակավարյունության դեպքում խորհուրդ է տրվում՝

❖ Վերցնել հավասար քանակությամբ գազար, բողկ, ճակն-

դեղ, քերել, քամել, հյութը լցնել մուգ գույնի շշի մեջ: Բերանը խնորով անուր փակել, այնուհետև դնել տաք ջեռոցի մեջ և պահել 4 ժամ: Ստացված հյութը խմել օրը երեք անգամ 1 թ/գ՝ ուտելուց առաջ:

❖ 1 թ/գ մասուրին ավելացնել 250 մլ եռացրած ջուր, թույլ կրակով 10 րոպե եփել էնալապատ կաթսայում, այնուհետև ծածկոցով փաթաթել, թողնել մեկ օր, քամել, ավելացնել 1 լ մեղր: Օգտագործել օրը երեք անգամ՝ ճաշելուց 15-20 րոպե առաջ: Այս խառնուրդը ցանկալի է օգտագործել ողջ տարվա ընթացքում, քանի որ այն օգտակար է նաև ուժասպառության և նյութափոխանակության խանգարումների դեպքում:

❖ Կաթսայի մեջ լցնել 200-ական գրամ կակաո, մեղր, կարագ, խոզի փորոտիքի հալած ծարպ, թույլ կրակով եփել՝ անընդհատ խառնելով: Երբ եռա, կրակից վերցնել, թողնել սառչի, հետո լցնել ապակյա տարայի մեջ՝ պահելով սառը և մուր տեղում: Օգտագործել օրը չորս անգամ՝ 1 թ/գ խառնուրդը նախօրոք լուծելով 1 բաժակ տաք կաթի մեջ:

❖ Ամեն օր ուտել եղինջով ապուր և հում մաղաղանոս:

❖ Ամեն առավոտ ուտել 100 գ գազար՝ այն խառնելով թթվասերի կամ արևածաղկի ձերի հետ:

❖ 300 գ սխտորը մաքրել և լվանալ, լցնել 1 լ մաքուր սպիրտի մեջ, 3 շաբաթ թրմել: Խմել օրը երեք անգամ 20 կաթիլ՝ թուրմը լցնելով 0,5 բաժակ կաթի մեջ:

❖ Հաճախակի ուտել եփած բազուկ կամ խմել բազուկի հյութ, որը կիսով չափ պետք է խառնել գազարի հյութի հետ՝ ընդունելով օրը 3-4 բաժակ:

❖ Օրը 2 բաժակ դառը գինի խմել, մեկը՝ ճաշին, մյուսը՝ ընթիթին:

❖ Վերցնել 1-ական ճ/գ եղինջի տերևներ, խատուտիկի արմատներ, հազարաթերթիկի ծաղիկներ, ավելացնել 1 բաժակ եռացրած ջուր, թողնել 3 ժամ, հետո քամել: Խմել 1/4 բաժակ՝ ուտելուց 20 րոպե առաջ: Բուժման կուրսը 15 օր է:

❖ Ամեն օր ուտել 400-600 գ թարմ խնձոր:

-31- ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

❖ 100 գ ընկույզի միջնապատին ավելացնել 0,5 լ գինի (կագոր), 2 շաբաթից քամել: Խմել օրը 3-4 անգամ 2-ական ճ/գ՝ ուտելուց առաջ:

❖ 60 գ հազարաթերթիկին ավելացնել 1 բաժակ եռացրած ջուր, 1 ժամից քամել: Խմել օրը երեք անգամ՝ 1-ական թ/գ:

❖ 1 ճ/գ եղինջի և կեչու տերևների վրա լցնել 1,5 բաժակ եռացրած ջուր, 1 ժամ թողնել, քամել, ավելացնել 0,5 բաժակ ճակնդեղի հյութ: Խմել 0,5 բաժակ՝ ուտելուց 20 րոպե առաջ: Բուժման կուրսը 15 օր է:

❖ 1 ճ/գ մեղրին ավելացնել 0,5 ճ/գ աղացած ընկույզ և 0,5 ճ/գ ծիրանի աղացած չիր: Ընդունել օրը երեք անգամ 1-ական ճ/գ՝ ուտելուց առաջ:

❖ Օրական ուտել 100 գ ծիրան կամ ծիրանի չիր:

❖ 1 բաժակ աղացած կանաչ ընկույզին ավելացնել 0,5 լ օղի, դնել մութ և տաք տեղում, թողնել 10 օր, ապա քամել ու վրան ավելացնել 1 բաժակ հալեցրած մեղր, լավ խառնել: Պահել սառնարանում: Ընդունել առավոտյան և երեկոյան 1-ական ճ/գ:

❖ 7 ճ/գ գազարի հյութին ավելացնել 2 ճ/գ ճակնդեղի և 1 ճ/գ վարունգի հյութ: Խմել օրը երեք անգամ 0,5 բաժակ՝ ուտելուց 20-30 րոպե առաջ: Բուժման կուրսը 15-20 օր է:

❖ Խմել խոզի կամ կատվի կաթ:

❖ 6 հատ մեծ և կանաչ խնձորները կտրատել, ավելացնել 400 գ փորոտիքի ճարպ, դնել ջեռոցը և մարմանդ կրակով հալել: 12 ծվի դեղնուցը 1 բաժակ շաբարավազի հետ հարել այնքան, մինչև սպիտակի, ավելացնել 400 գ մանրած շոկոլադ: Խնձորով ճարպը մաղով անցկացնել, ավելացնել շոկոլադի, շաբարավազի և դեղնուցների խառնուրդը: Սառեցնել, ստացված զանգվածը քսել հացին և ուտել օրը 3-4 անգամ՝ վրայից խմելով գրեթե եռման կաթ: Յիշանդի քաշը կավելանա շաբաթական 800 գ-ից մինչև 2 կգ:

❖ Կոտեմը 3 մասի բաժանել, մարմանդ կրակի վրա բուսա-

կան յուղով տապակել, լցնել եփած բրնձի վրա, ավելացնել քնջութի ծեր և ուտել:

❖ Ղանձլամերն ակտիվացնում է արյունաստեղծման գործընթացը, բարձրացնում է օրգանիզմի իմունային ակտիվությունը:

❖ 7-14 օր պահել թզային մոնոդիետա, այսինքն՝ միայն թուզ ուտել:

❖ 10-15 օր պահել խաղողային մոնոդիետա:

❖ Ամեն օր թարմ հոն ուտել. նրա մեջ մեծ քանակությամբ երկար է պարունակվում:

❖ 1 թ/զ հաղարջի չորացրած տերևները լցնել 1 բաժակ եռացրած ջրի մեջ, պահել 15-20 րոպե, խմել օրը մի քանի անգամ:

❖ 1 բաժակ եռացրած ջրին ավելացնել 3 ճ/զ ցորենի թեփ, կափարիչով ծածկել և թողնել երկու ժամ: Ընդունել 1-ական ճ/զ՝ ուտելուց կես ժամ առաջ:

❖ Խմել ծներեկի և գազարի հյութերի խառնուրդ. այն շատ օգտակար է սակավարյունության դեպքում:

❖ Պետք է օգտագործել հետևյալ սննդամբերը՝ դրում, դդումի կորիզ, դդմիկ, սմբուկ, կարտոֆիլ, պղպեղ, եգիպտացրեն, կաղամբ, սոխ, սխտոր, ճակնդեղ, մաղադանոս, հազար, սամիթ, հնդկածավար, քնջութ, ոսպ, ոլոռ, խաղող, կանաչ խնձոր, թութ, երակ, մորի, մոշ, թալ, սեխ, չիչիսան, նարինջ, կիտրոն, ծիրան, սև մասուր, թարմ սալոր, չամիչ, արևածաղկի սերմ, ծու, կալառ, սունկ, հավի և տավարի միս, տավարի փորոտիքի ճարպ, սարդ, թթվասեր, գինի:

❖ Անհրաժեշտ է սահմանափակել կաթի, հրուշակեղենի, ճարպերի օգտագործումը:

❖ Ուտելուց հետո չի կարելի թեյ խմել. այն օրգանիզմից դուրս է մղում երկաթը՝ առաջացնելով սակավարյունություն:

❖ Օրգանիզմում երկաթը յուրացվում է վիտամին C-ի առկայության դեպքում, հետևաբար խորհուրդ է տրվում ամեն օր խմել նարնջի, թուրինջի և կանաչ խնձորի հյութ կամ էլ՝ պարզապես ուտել այդ մրգերը:

ՍՈՎԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

Առողջությունը պահպանելու կամ այն վերականգնելու ամենակարևոր և հուսալի ուղիներից մեկը տևական քաղցն է: Քաղցելը՝ սննդից լրիվ հրաժարվելը, խորհուրդ է տրվել վաղնջական ժամանակներից ի վեր:

Քաղցի միջոցով բուժվել են այսպես կոչված «անբուժելի» հիվանդությունները՝ բորոտությունը, երիկամաբորբի տարբեր տեսակները, սակավարյունությունը, ստամոքսի խոցը, սրտի հիվանդությունները, մանկական անդամալուծությունը, կատառը, պիորեան (լնդերի հիվանդություն, թարախածորանք) և այլն: Մեկից մինչև չորս օր քաղցելը լիովին բավարար է սովորական մրսածությունը բուժելու համար:

Նախքան սովարուժության անցնելը՝ խորհուրդ է տրվում մեկ-երկու օր ուտել հում մրգեր, բանջարեղեն: Քաղցի ընթացքում պետք է պահպանել հիգիենայի կանոնները՝ օրը մի քանի անգամ լվանալ ատամները, մաքրել լեզվի վրայի սպիտակ փառը, լոգանք ընդունել, օրվա ընթացքում երկու անգամ հոգնա անել:

Քաղցի «տառապանքները» մարդն օգում է միայն առաջին երկու օրը, իսկ հետո ի հայտ է գալիս թերևության օգացում, սրվում են օգայական բոլոր օրգանները: Քաղցելու հիմքերորդ օրն ուտելու ցանկություն է առաջանում, այնուհետև ծոն պահողը տհաճությամբ է նայում սննդին:

Սովարուժության ժամանակ բերանից տհած հոտ է գալիս, լեզվի վրա փառ է գոյանում, երակազարկն արագանում է՝ հասնելով 120-ի կամ էլ ընդհակառակը՝ ընկնում է: Կարող է լինել սրտխանութ, գլխացավ, գլխապտույտ, ջերմություն, թուլություն, ուժասպառություն, թերևակի մրսածություն, լուծ, թքի կուտակում: ճիշտ է, այս բոլոր դրսնորումները տհած են, սակայն

անվտանգ են. դրանք նպաստում են օրգանիզմի մաքրմանը: Նկատվում է նաև քաշի կորուստ: Սկզբում քաշի անկումն արագ է տեղի ունենում, այնուհետև այդ գործընթացն աստիճանաբար նվազում է: Ի դեպ, գեր մարդիկ չափազանց արագ են նիհարում՝ օրական կորցնելով մոտավորապես 400-800 գ քաշ:

Քաղցելու ժամանակ հանգիստը ծայրաստիճան ցանկալի է, սակայն դա չի նշանակում, որ քաղցողն ընդհանրապես պիտի հրաժարվի ամեն տեսակի գործունեությունից: Պարզապես անհրաժեշտ է խնայել էներգիան և աշխատել շատ չիղանել:

Սովարուժության ընթացքում պետք է մարմինը տաք պահել, չմրսել. դա ոչ միայն տիած է, այլև՝ վտանգավոր:

Ոմանք խորհուրդ են տալիս քաղցել առանց ջուր օգտագործելու, ոմանք էլ այն կարծիքին են, որ օրական հարկավոր է խնել 3 լիտրից ոչ պակաս: Խնելու ցանկություն առաջանալու դեպքում պետք է խնել մի բաժակ ծորակի մաքուր ջուր: Թարմ ջրի փոխարեն կարելի է օգտագործել նաև թորած ջուր, իսկ դրա համը բարելավելու համար ցանկալի է հանքային ջուր ավելացնել: Թորած ջրի մեջ թույլատրվում է լցնել գազարի, բազուկի, նեխուրի մանրած ցողուններ: Սովարուժության ժամանակ արգելվում է օգտագործել ալկոհոլ, սուրճ, թեյ, ծխախոտ կամ որևէ դեղամիջոց:

Երբ մարդը սնունդ չի ընդունում, նրա մարմինը սնվում է իր ներքին պաշարների հաշվին, իսկ դրանց սպառումից հետո սկսվում է հյուծումը: Հենց այդ պահին քաղցելն անհրաժեշտ է դադարեցնել, քանի որ օրգանիզմի մաքրումն ու երիտասարդացումն արդեն ավարտված են: Սովարուժության տևողությունը կախված է քաղցողի առողջությունից, նրա կենսակերպից և ամենագլխավորը՝ հիվանդության բնույթից: Հյուծված հիվանդներին թույլ չի տրվում երկար ժամանակով քաղցել:

Սովարուժության ժամանակ օրգանիզմում ընթանում են մաքրման գործընթացներ: Կենսական ուժը, որը սովորաբար ծախսվում է մարսողության վրա, քաղցելու ընթացքում օգնում է օրգանիզմից հեռացնել անցանկալի նյութերը: Շատերը կարծում

-35- ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Են, թե մարսողության օրգանն ստամոքսն է, մինչդեռ բոլոր օրգաններն էլ իրենց ուրույն դերն ունեն նյութափոխանակության գործընթացում: Յշվանդ մարմնում բոլանում են բոլոր օրգանների գործառույթները: Անառողջ օրգանիզմը ննան է անսարք մեքենայի, իսկ այն վերանորոգելու համար նախ և առաջ հարկավոր է կանգնեցնել: Քաղցելու ընթացքում ավելանում է արյան կարմիր գնդիկների քանակը, այրվում են ճարպերն ու մկանային շաքարը, նվազում է բոլոր օրգանների ծանրաբեռնվածությունը, կարգավորվում է սրտի աշխատանքը, բարելավվում է արյան շրջանառությունը, լավանում է արյան մատակարարումն ուղղելին:

Քաղցն առաջին հերթին անդրադառնում է ստամոքսի և աղիքների վրա: Այդ ընթացքում դրանք հանգստանում են և վերականգնում իրենց ուժերը: Մեկշաբաթյա քաղցի ժամանակ մաքրվում ու մանրէազերծվում են բարակ աղիքները, իսկ հաստ աղիքի մաքրման համար պահանջվում է նի փոքր ավելի երկար ժամանակ: Քաղցելիս ստամոքսահյութ չի արտադրվում, բուժվում են ստամոքսի խոցերն ու բորբոքումները:

Քաղցն իր առանձնահատուկ ազդեցությունն է ունենում զգայարանների վրա. տեսողությունը սրվում է, լսողությունը՝ լավանում (կարող է բուժվել նույնիսկ խլությունը): Դա բացատրվում է նրանով, որ ներքին ականջը քթախոռոչին միացնող փողն ազատվում է աղտոտվածությունից և կատառային գոյացություններից: Սրվում են նաև համի ու հոտառության զգայարանները:

Սովաբուժությունից հետո կանոնավոր սնվելուն պետք է անցնել աստիճանաբար: Քաղցի դադարեցումից հետո վերականգնվում է ախտրժակը, անհետանում է լեզվի փառը, անցնում են բերանի տիած համն ու հոտը, մաքրվում է մեզը, ջերմությունն ու զարկերակը կարգավորվում են:

Քաղցը վերականգնում է մարդու ոչ միայն ֆիզիկական առողջությունը, այլև հստակեցնում և պայծառացնում է միտքը: Ի վերջո քաղցելն անհրաժեշտ է և' ֆիզիկական, և' հոգևոր առողջության համար:

Սովարուժությունը խստիվ հակացուցված է հետևյալ դեպքերում՝

- շնչառական օրգանների բորբոքային հիվանդություններ
- չարորակ նորագոյացություններ
- շարակցական հյուսվածքների հիվանդություն
- արյան քաղցկեղ
- տուբերկուլյոզ
- լարողի ցիրոզ
- երիկամային անբավարարություն
- որովայնախոռոչի հիվանդություններ
- սրտի ռիթմի խանգարումներ
- թրոմբոֆլեբիտ և թրոմբոզ
- սուր կամ խրոնիկական հեպատիտ
- սուր վարակիչ հիվանդություններ
- հղիության և կերակրման շրջանում
- մինչև 14 տարեկան և 70-ից բարձր անձանց
- չճշտված ախտորոշումների դեպքում

Սովարուժությունն սկսելուց առաջ բժշկի հետ պետք է խորհրդակցեն նրանք, ովքեր տառապում են սույն հիվանդություններով՝

- ստամոքսի և տասներկումատնյա աղիքի խոցային հիվանդություններ
- երակների վարիկոզ լայնացում
- լեղաքարային հիվանդություններ
- շաքարային դիաբետ
- պողագրա

ՀԵՏԱՋՐՋԻՐ Է ԻՄԱՆԱԼ

*Պլուտարքոսն ասել է. «Դեղորայքի փոխարեն ավելի լավ կլինի սոված մնալ մեկ-երկու օր»:

*Դայտնի է, որ Զրիստոսը, Մովսեսը, Եղիան 40 օր քաղցած են մնացել:

*Աստվածաշնչյան Դավիթը հաճախ պատ էր պահում, իսկ ի շնորհիվ Հովսեփի, ողջ Հրեաստանում օրինականացվեց քաղցելը՝ որպես առողջացման միջոց:

*Դուկասի ավետարանից տեղեկանում ենք, որ փարիսեցիները շաբաթը 2 անգամ պատ էին պահում:

*Ավելի քան 2000 տարի առաջ փիլիսոփա Ասկրեպիոն սովարության կոչ էր անում:

*Փիլիսոփա, թվերի տեսության հիմնադիր Պյութագորասը մտավոր ունակությունների զարգացման համար 40-օրյա ծոն էր պահում և նույնը պահանջում էր իր աշակերտներից:

*Պլատոնն ու Սոկրատեսը պարբերաբար 10-օրյա ծոն էին պահում:

*Հրդկական և չինական հնագույն գրքերում խորհուրդ է տրվում դեղ օգտագործելու փոխարեն մի քանի օր քաղցած մնալ:

*Հրեաների գաղտնի գիտությունը և միստիկ փիլիսոփայությունը՝ Կաբալան, ևս խորհուրդ է տալիս քաղցել:

*Արաք բժիշկ Ավիցենան իր հիվանդներին (հատկապես՝ ծաղիկի և սիֆիլիսի դեպքում) հաճախ պարտադրում էր քաղցել:

*Բժշկության հայր Յիպոկրատն ասել է. «Եթե մարմինը մաքրված չէ, ինչքան շատ սնես այն, այնքան շատ կվնասես»:

*Մահմեդականների մոտ ռանգամը՝ պասը, տևում է 1 ամիս:

* Հնում վանականները հաճախ հրաժարվում էին սննդից՝ գլխավորապես կրոնական նկատառումներով, իսկ կրոնի սպասավորի կոչում ստանալու համար յուրաքանչյուր ոք երկար ժամանակ աղոթում և պահում:

* Ցելսիուսը սովարութությունը կիրառել է ընկնավորության և դեղնախտի բուժման նպատակով:

* Գրեթե բոլոր հնագույն ժողովուրդները մարմնի մաքրման նպատակով հրաժարվում էին սննդից:

* Ծոնը և պասը կրոնական տեսանկյունից նպաստում են հոգևոր վերելքին, իսկ առողջության տեսանկյունից՝ մաքրում են օրգանիզմն ավելորդ տարրերից:

* Պարսկաստանի արևապաշտները 50-օրյա պաս էին պահում: Այդ սովորույթն առ այսօր կիրառվում է նաև Հնդկաստանում:

* Կելտերի դրուիդյան քրմերը պաշտամունքի հաջորդ աստիճանին անցնելուն պատրաստվելիս երկարատև պաս էին պահում:

* Մահատմա Գանդին՝ Հնդկաստանի հոգևոր մեծ առաջնորդը, երկար ժամանակով հաճախակի պաս էր պահում և խորհուրդ էր տալիս գրադվել սովարութությամբ ոչ միայն առողջության, այլև՝ մտավոր ու հոգևոր զարգացման համար:

* Ներկայումս էլ բազում ցեղեր պաս են պահում՝ խստորեն հետևելով նրա բոլոր կանոններին:

* 1822 թ. Եգիպտոսի ֆրանսիական օկուպացման ժամանակ արաբական հոսպիտալներում քաղցելու շնորհիվ սիֆիլիսի բուժման բազմաթիվ դեպքեր են գրանցվել:

* Բժիշկ Է. Շոկերը քաղցելու մասին տեսությունը համարել է նոր գիտություն և քաղցի միջոցով բուժել է ոչ միայն սուր, այլև՝ խրոնիկական շատ հիվանդություններ:

* Բեռնարդ Շոուն իր ստեղծագործությունների հաջողությունը վերագրում էր քաղցի ազդեցությանը:

ԱՆ ԳԻՆԱ

- ❖ Չոր եղինջն աղալ, մեղրով շաղախել և ուտել:
- ❖ Կիտրոնը կտրատել, կեղևը մաքրել, դնել բերանը և պահել այնպես, որ հնարավորինս մոտ լինի կոկորդին:
- ❖ Կիտրոնի կտորները ծծել, հետո կուլ տալ: Ժամը մեկ կրկնել այդ գործողությունը:
- ❖ Կիտրոնաթթվի 30 %-ոց լուծույթով ողողել կոկորդը՝ գլուխը ետ գցելով: Ողողումները կատարել ողջ օրվա ընթացքում՝ ժամը մեկ:
- ❖ Երկու պղնձյա մետաղադրամները թափայում տաքացնել, հեղաքրթով մաքրել, դնել պարանոցին՝ նշագեղձերի վրա, և կապել:
- ❖ Եթե բորբոքված է աջ նշագեղձը, ապա աջ ձեռքի բթամատի և ցուցանատի արանքում սխտորի կիսած պճեղ դնել ու կապել: Զախի դեպքում կատարել հակառակը: Կես ժամ անց, երբ կլինի ցավ, ծակծկոց, սխտորը հանել:
- ❖ Դիվանդի բերանին մի մեծ գորտ մոտեցնել այնպես, որ նա շնչի ուղիղ գորտի վրա: Գորտի սրտխփոցը կանաց-կանաց կսկսի հաճախակիանալ: 8-10 րոպե անց հիվանդն իրեն լավ կզգա, իսկ գորտը կսատկի: Բուժման այս տարօրինակ եղանակը կիրառվում է Ռուսաստանում, Մերձավոր և Միջին Արևելքում:
- ❖ Առավոտյան և երեկոյան ուտել թթվասեր՝ դանդաղ ներծծելով, կոկորդում երկար պահելով:
- ❖ Կոկորդը ողողել թարմ կաղամբի հյութով:
- ❖ Խմել կաղամբի թթվաջուր կամ խակ խաղողի հյութ:
- ❖ Մասուրի արմատների վրա լցնել 1 լ եռացրած ջուր, 20 րոպե թողնել և խմել օրվա ընթացքում:
- ❖ Կերոսինը գտել՝ անցկացնելով բամբակի հաստ շերտի միջով, թեյի գդալի պոչին մի կտոր բամբակ փաթաթել, թաթախել

գտված կերոսինի մեջ և յուրաքանչյուր 30 րոպեն մեկ քսել նշիկ-ներին: Կոկորդացավն արագ կրուժվի: Սույն միջոցը չի կարելի կիրառել, եթե նշիկների վրա թարախապալարներ են նկատվում:

❖ Անգինան կրուժվի, եթե շնչեք խաշած կարտոֆիլի գոլորշին:

❖ Սոխի հյութով ողողել կոկորդը. այն մաքրում և բուժում է լորձոտ անգինան:

❖ Հում ճակնդեղը քերել, 1 բաժակ ճակնդեղին ավելացնել 6 %-անոց 1 ծ/գ քացախի էսենցիա, թողնել 4 ժամ, քամել, փոքրինչ տաքացնել և ստացված խառնուրդով ողողել կոկորդը: Բուժման կուրսը 2 շաբաթ է:

❖ Խմել թթենու, ծիրամենու կամ էլ տանձենու տերևներից պատրաստված եփուկ:

❖ 5 պճեղ սխտորը ճզմել, ավելացնել 0,5 լ եռացրած ջուր, ծածկոցով փաթաթել, գիշերը թողնել, քամել և դրանով ողողել կոկորդը:

❖ 1 ծ/գ ալոեի հյութին ավելացնել 250 գ մեղր, 350 գ կարմիր գինի: Նշագեղձերի բորբոքման ժամանակ դա կիրառել որպես քսուր:

❖ Ընկուզենու թարմ տերևները ծեծել, հյութը քամել, մեղրով եփել և դրանով ողողել կոկորդը:

❖ Տիբերական բժշկությունն առաջարկում է 0,5 լ օղուն ավելացնել 10 գ չոր քաֆուր (կամֆար) և դրանով կոկորդին թրջոց դնել:

❖ Կոկորդացավը կանխելու համար հաճախակի օգտագործել սպանախ:

❖ 2 լ տաք ջրին ավելացնել 1 բաժակ խնձորի քացախ, սավանը թրջել այդ լուծույթով և դրանով փաթաթել հիվանդին, պարկեցնել անկողնում, տաք և ծանր ծածկոցով հերմետիկ ծածկել ու թեյ տալ: Քիչ անց հիվանդը կքրտնի և կբուժվի:

❖ Սալորենու տերևների եփուկով ողողել կոկորդը:

❖ 1 բաժակ եռացրած ջրին ավելացնել 1 ծ/գ ընկուզենու չորացրած տերև, բերանը փակ վիճակում 2 ժամ թրմել և ողողել կոկորդը:

ՓՏԱԽՏ

Փտախտը (գանգրենա) մարմնի որոշակի հատվածների «մահացումն» է: Այս հիվանդության ախտորոշումը մշտապես ընդունվում է որպես մահվան դատավճիռ: Բժիշկները փտախտի դեպքում գրեթե միշտ դիմում են վիրահատության, սակայն ժողովրդական բժշկությունը կիրառում է այդ հիվանդության բուժման ինքնատիպ եղանակներ:

Երբ փտախտն սկսվում է մատի կամ ծայրանդամի հատումից հետո, այն շատ հաճախ ճակատագրական ավարտ է ունենում: Չնայած ներքոի հիշյալ ժողովրդական միջոցները փորձված են, ուժեղ և հուսալի, բայց այնուամենայնիվ անհրաժեշտ է դիմել բժիշկներին, քանզի գանգրենան չափազանց լուրջ և կյանքի համար մեծ վտանգ ներկայացնող հիվանդություն է:

Փտախտի դեպքում խորհուրդ է տրվում՝

❖ Նոր թխված սև հացը (ցանկալի է՝ աշորայի) աղով շաղախել, լավ ծամել, հիվանդ տեղը պատել ծամած հացի հաստ շերտով, կապել: Սա բավականին հայտնի ռուսական ժողովրդական միջոց է:

❖ Լամաճ՝ բուդդայական կրոնավորը, փտախտով հիվանդին բուժել է հետևյալ կերպ՝ նա հիվանդի սևացած ձեռքի վրա դանակով կտրվածք է բացել, թեթևակի մաքրել է վերքը և թափել վարակված արյունը: Այնուհետև եզնուդտի (յակ) վրա կտրվածք է արել ու մի քիչ արյուն վերցրել: Յակի արյունը քսել է հիվանդի վերքին և վիրակապել: Լամաճ այս գործողությունը կրկնել է չորս անգամ: Վարակն այլևս չի տարածվել, և հիվանդը ողջ է մնացել:

❖ Գանգրենայի դեպքում խորհուրդ է տրվում վերքի վրա գորտ դնել:

❖ Վերքի վրա դնել նոր մորթած ոչխարի կամ կովի լյարդի մի կտոր: 1-2 ժամ անց թարախաբշտիկներ կհայտնվեն: Ախտահանված ասեղով դրանք հարկավոր է ծակել և նորից լյարդի կտոր դնել: Այս ամենը կրկնել այնքան, մինչև թարախաբշտիկները կդադարեն առաջանալ: Բուժումից հետո լյարդի կտորը պետք է այրել կամ թաղել հողի մեջ: Սույն մեթոդը շատերին փրկել է անդամահատվելուց:

❖ Պլինիոսն այս հիվանդությունը բուժել է՝ խոցի վրա փտած խնձորներ դնելով:

❖ Զոն Արմսթրոնգն իր «Անմահական ջուր» գրքում հավատացնում է, որ միզաբուժության միջոցով փտախտն ավելի արագ է բուժվում, քան` շատ ավելի ծանր ու մահացու հիվանդությունները: Նրան հաջողվել է 1 ամսում բուժել մի կնոջ (այդ ընթացքում հարկավոր է խմել միայն ծորակի ջուր և մեզ, ինչպես նաև հին մեզով թրջոցներ դնել):

❖ Կովի 200 գ ուկրածուծին ավելացնել 10 գ ակնամոմ, խառնուրդը երեք անգամ դնել կրակին և, հասցնելով եռման աստիճանի, կրակից վերցնել: Ստացված քսուքը լցնել ապակյա տարայի մեջ և օրը երեք անգամ 1-ական թ/գ քսել վերքի վրա:

❖ Միջնադարյան բժշկապետերը պնդում են, որ ելակը շատ օգտակար է փտախտով տառապողների համար:

ՊԵՊԵՆՆԵՐ

Պեպեններն առաջանում են հատկապես գարնանը՝ արևի ներգործությունից, իսկ աշնանը և ձմռանը դրանք գումազրկվում են ու նույնիսկ կարող են անհետանալ: Պեպենների առկայությունը պայմանավորված է մաշկային պիգմենտների արագ կուտակմամբ, որը չի կարելի դիտել որպես հիվանդություն: Ոմանք պեպենները համարում են կոսմետիկական թերություն, իսկ ոմանք էլ գտնում են, որ այն առավել գրավիչ է դարձնում մարդուն:

Պեպենների մակերեսը լինում է հարթ, դրանք չեն թեփոտվում և մաշկի մակերեսից չեն բարձրանում: Կարող են լինել ինչպես եզակի, այնպես էլ՝ բազմաքանակ՝ գետեղված լինելով միմյանցից առանձին կամ միախառնված: Պեպենները կարող են ի հայտ գալ ոչ միայն դեմքին, ձեռքերին, այլև՝ մարմնի տարբեր հատվածներում:

Պեպեններից ազատվելու համար խորհուրդ է տրվում՝

❖ Կաթի մեջ սև հաց փշրել, մի քանի ժամ թողնել, այնուհետև քսել պեպենների վրա:

❖ Ծեծած ընկույզը քսելով պեպենածածկ մասերին՝ կազատվեք դրանցից:

❖ Սոխը մաքրել, լվանալ, ճզմել, թանզիֆով հյութը քամել և քսել պեպեններին:

❖ Վարունգի հյութը քամել և օրը 2-3 անգամ քսել դրանց վրա:

❖ Մաղաղանոսը կտրատել, վրան եռացրած ջուր լցնել, 20-30 րոպեից քամել և օրը 2-3 անգամ քսել պեպենապատ տեղերին:

❖ 1 թ/գ Հեղինեի խոտին ավելացնել 1 բաժակ սառը ջուր, բողնել 1 ժամ, 10 րոպե եռացնել, քամել և օրը երկու անգամ քսել պեպեններին:

❖ Հացի կվասը քսելով պեպեններին՝ կազատվեք դրանցից:

❖ Մաղաղանոսի հյութը կօգնի ազատվել անցանկալի պեպեններից:

❖ 2 գրալ խատուտիկը 15 րոպե եփել 300 մլ ջրում, օրը երկու անգամ քսել պեպեններին:

❖ Թթու կիտրոնը կազատի ձեզ պեպեններից, եթե այն քսեք դրանց վրա:

❖ 1 ճ/գ հում այսուրը լցնել բերանը, թքով շաղախել, այնուհետև քսել պեպեններին:

❖ Ամեն երեկո դրանց վրա մածուն քսել, 20-25 րոպեից սառը ջրով լվացվել: Ժողովրդական այս միջոցը ոչ միայն վերացնում է պեպենները, այլև սպիտակեցնում և փափկեցնում է մաշկը:

❖ 2 թ/գ քացախին ավելացնել 1 թ/գ կիտրոնի հյութ, 1 թ/գ ջուր: Պեպենների վրա քսել այդ խառնուրդը, և եթե քոր չգա, թողնել ամբողջ գիշեր: Այս միջոցը խորհուրդ է տրվում հատկապես ճարպոտ մաշկ ունեցողներին:

❖ 1 թ/գ ջրածնի պերօքսիդին ավելացնել 2 թ/գ գլիցերին, 2 թ/գ սպիրտ, 2 ճ/գ ջուր: Ստացված խառնուրդն օրը մի քանի անգամ քսել պեպենածածկ հատվածներին: Այս միջոցը կիրառելիս պետք է խուսափել հոնքերին, թարթիչներին և մազերին քսելուց, քանի որ դրանք կարող են գունաթափվել:

❖ Զվի սպիտակուցի և կիտրոնի խառնուրդից կամ էլ սպիտակուցից և ջրածնի պերօքսիդի խառնուրդից ստացված քսութը ձեզ կազատի պեպեններից՝ թարմացնելով և սպիտակեցնելով մաշկը:

❖ Որպեսզի խուսափեք պեպենների առաջացումից, հարկավոր է գարնանային արևից դեմքը պաշտպանել հովանոցով, լայնեզր գլխարկով:

Օ ԳՏԱԿԱՐ Է ԻՄԱՆԱԼ

*Կանաչ թեյն օրգանիզմից հեռացնում է թունավոր նյութերը, կարգավորում է արյունատար անոթների լարվածությունը և մարտողության գործընթացը, անց է կացնում գլխացավը, առույգացնում է, ունի լեղամուղ հատկություն:

*Մեղրի հետ կանաչ թեյի գուգակցումն ուղղակի անփոխարինելի կենսահեղուկ է:

*Ամռանը ձեր մաշկը հիանալի տեսք կունենա, եթե այն լվանաք կանաչ թեյով կամ էլ թօջոցներ դնեք:

*Սուր գլխացավի դեպքում խորհուրդ է տրվում խմել կանաչ կամ սև թեյ, որին անհրաժեշտ է մի փոքր անանուխ ավելացնել:

*Ցածր ճնշման ժամանակ օգտակար է կանաչ, իսկ բարձրի դեպքում՝ սև թեյը:

*Օրական մի քանի բաժակ կանաչ թեյ ընպելով՝ կկանխեք ուռուցքի առաջացումը:

*Պետք է նկատի ունենալ, որ թեյը բարձրացնում է ստամոքսի թթվայնությունը:

*Ուտելուց հետո թեյ չի կարելի խմել, քանի որ այն օրգանիզմից դուրս է մղում երկարը:

*Որքան խոշոր են թեյի թերթիկները, այնքան դրանք ավելի բարձրորակ են:

*Մանդարինի չորացրած կեղևից պատրաստված թեյն օգտակար է թոքերի բորբոքման, փքվածության, ախտորժակի բացակայության, սրտխառնությի և ընդհանուր թուլության ժամանակ: Այն հակացուցված է երիկամային հիվանդությունների դեպքում:

*Մի' մոռացեք, որ 15 րոպե անց թեյի թուրմը վերածվում է թույնի, հետևաբար այն պիտանի չէ օգտագործման համար:

*Մասուրից պատրաստված թեյը մեղրով խմելով՝ կամրացնեք օրգանիզմը: Սա հրաշալի կանխարգելիչ միջոց է մրսածության դեմ, ինչպես նաև օգտակար է արյան բարձր ճնշման դեպքում:

*Մանրացված կոճապղպեղով, դարչինով և հիլով պատրաստված թեյը շատ օգտակար է մրսածության ժամանակ:

*Եթե մշտապես դաղձի թեյ ընպեք, կունենաք թարմ և վարդագույն մաշկ:

*Ալոճենու պտուղներից պատրաստված թեյն օգտակար է սրտանոթային հիվանդություններով տառապողներին:

*Անպտղության, կանացի օրգանների բորբոքվածության ժամանակ հարկավոր է հաճախակի խմել երիցուկով պատրաստված թեյ:

*Փորլուծության ժամանակ օգտակար է արկքուրիկից պատրաստված թունդ թեյը:

*Փորլուծության դեպքում խորհուրդ է տրվում օրվա մեջ եթեք անգամ խմել սերկակի կորիզից և կեղևից պատրաստված թեյ:

*Տաք թեյի թրջոցները, երիցուկի, մաղաղանոսի եփուկները օգտակար են աչքերի համար. վերացնում են հոգնածությունը, բորբոքվածությունը, թարմացնում և հարթում են կոպերի մաշկը:

*Թեյի եփուկին ջուր ավելացնել և դրանով լվանալ դեմքը: Այն թարմացնում է մաշկը՝ դեմքին տալով թխություն:

*Երեկոյան խմել եռագույն մանուշակից պատրաստված թեյ: Այն շատ օգտակար է ճարպահոսության և կորյակների դեպքում:

*Թեյը խթանում է նյութափոխանակությունը, հագեցնում է ծարավը, անց է կացնում հոգնածությունը, թարմացնում է և առույգացնում:

*Արկքուրիկից (զերօնօյ) պատրաստված թեյը լավացնում է նյութափոխանակությունը:

ԴԻԱԲԵՏ

Տարբերում են դիաբետի երկու տեսակ՝ շաքարային և ոչ շաքարային:

Ոչ շաքարային դիաբետն արտահայտվում է հաճախակի և առատ միզումներով: Մեզի մեջ շաքարի քանակությունը լինում է չափավոր: Քանի որ մեզի հետ շատ ազդու և ֆուֆոր է դրւոս գալիս, հիվանդն արագ հոգնում է, նրա մոտ նկատվում են թքի անբավարարություն, բերանի և մաշկի չորություն: Անքնության, վախի, անախորժությունների ռեպրում հիվանդությունը սաստկանում է: Պարբերական նոպաների ժամանակ օրական պետք է խմել 1 ճ/գ գլիցերին, իսկ ֆուսֆորը լրացնելու համար ուտել միս, ձուկ, խեցգետին, ուղեղ, կաթ, դեղնուց: Հիվանդին անհրաժեշտ են երկաթ, բրոն, վալերիհան:

Շաքարային դիաբետի ժամանակ լինում է հաճախամիզություն (հատկապես՝ գիշերամիզություն), քաշի անկում, քաղցի և ծարավի զգացում, ընդհանուր թուլություն, տեսողության վատացում, շնչարգելություն: Մաշկը քոր է գալիս, վերքերը դժվարությամբ են սպիանում, բերանը չորանում է, և երկաթի համ է զգացվում: Մեզի և արյան մեջ շաքար է հայտնաբերվում:

Նախ և առաջ հարկավոր է հրաժարվել շաքարից ու շաքար պարունակող սննդից (հաց, բրինձ, ձավար, չամիչ, պատիճավոր բույսեր): Անհրաժեշտ է ավելի շատ ուտել միս, ճարաբեր, թարմ մրգեր (բացառությամբ կեռասի, սալորի, խաղողի, աղամաթուզի, շագանակի, քանի որ սրանց մեջ շատ օսլա է պարունակվում): Օգտակար են նաև կաթնաշոռը, անսեր կաթը, թթված կաթը (քրոստոկաաշա): ճարպերի մարսումը դյուրացնելու համար պետք է կիրառել համեմունքներ: Շաքարի փոխարեն սննդի մեջ օգտագործել սախարին:

Խորհուրդ է տրվում շաքարը գոնե մեկ անգամ դիետա պահ-

պանել՝ ուտելով միայն թարմ բանջարեղեն, 3-4 ծու և մի քիչ թարմ միս:

Չաքարային դիաբետի դեպքում խորհուրդ է տրվում՝

❖ Վերցնել 3 ճյուղ ընկուզենու արմատ, լավ լվանալ, կտրել այն չափով, որ տեղավորվի 3 լիտրանոց ապակյա տարայի մեջ: Վրան ավելացնել այնքան գոլ ջուր, որ տարան լցվի: Կափարիչը մի քանի տեղից ծակծել, որանով փակել տարայի բերանը և թողնել 4 օր: Խմել օրը 3-ական բաժակ՝ ուտելուց 15 րոպե առաջ: Հեղուկը պահել սառնարանում, իսկ երբ այն վերջանա, նույն արմատների վրա նորից ջուր լցնել, թրմել և խմել: Երրորդ անգամ արմատները պետք է փոխել: Բուժման կուրսը 1 ամիս է: Այս բուժամիջոցը թույլատրվում է տարվա մեջ կիրառել մեկ անգամ:

❖ Դանդուրը լվանալ, աղալ, հյութը քամել և անոթի վիճակում խմել 1 թ/զ: Ընդունել շաքարը 2-3 անգամ: Հյութը խմելուց հետո ստուգել շաքարի տոկոսը, որպեսզի այն չափից ավելի չիշնի: 1 շաքար խմելուց հետո 1 շաքար դադար տալ, այնուհետև կրկնել այնքան, մինչև շաքարի տոկոսը կարգավորվի:

❖ Զնարավորինս շատ խմել հապալասենու տերևներից պատրաստված թուրմ:

❖ 50 հատիկ մեխակին ավելացնել 1 լ եռացրած ջուր, 7 օր թրմել, քամել և խմել մեկ կում՝ ուտելուց առաջ:

❖ 10 հատ դափնետերկին ավելացնել 3 բաժակ եռացրած ջուր: Խմել 0,5 բաժակ՝ ուտելուց առաջ:

❖ Օրական երեք անգամ ընդունել 1-ական թ/զ մանանեխիսերն:

❖ Երեկոյան 2 հատիկ սպիտակ լոբուն ավելացնել 100 գ եռացրած և սառեցրած ջուր: Առավոտյան լոբին ուտել և ջուրը խմել:

-49- ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

❖ Գարին ծլեցնել, աղալ, ավելացնել 70° C ջուր, 4 ժամ թողնել, քամել և մեղրով խմել օրը 4-6 անգամ՝ կեսական բաժակ: Այն իջեցնում է արյան մեջ շաքարի տոկոսը:

❖ Շաքարային դիաբետով տառապողներին խորհուրդ է տրվում ուտել միայն կիսաքաղցր թուր:

❖ Բժիշկ Րեյն ապացուցել է, որ խաղողի հյութն իջեցնում է արյան մեջ շաքարի տոկոսը:

❖ Շատ օգտակար է հալվեի հյութը:

❖ 200 գ մածունին ավելացնել 25 գ խնորիչ (ձրոյշ) և ամեն առավոտ անոթի վիճակում խմել: Բուժման կուրսը 10 օր է, որից հետո հարկավոր է մի քանի օր ընդմիջել և կրկին շարունակել:

❖ Սմբուկն ուժեղացնում է ինսուլինի ակտիվությունը, որի շնորհիվ էլ արյան մեջ շաքարի տոկոսն իջնում է:

❖ Շատ օգտակար է ծնեբեկի և գազարի հյութերի խառնուրդը:

❖ Ամեն օր խմել 1 ծ/գ ռատաճիայի արմատի եփուկ:

❖ 100 գ ծլեցրած ցորենը մսաղացով աղալ, ավելացնել բուսական յուր և ուտել առավոտյան՝ անոթի վիճակում:

❖ Կանաչ լորին չորացնել, մանրել, 15 գ լոբու վրա ավելացնել 1 բաժակ եռացրած ջուր, 10 րոպե մարմանդ կրակով եռացնել, քամել և սառելուց հետո ընդունել օրը երեք անգամ՝ 2-ական ծ/գ:

❖ Նեխուրի արմատը լվանալ, կեղևը մաքրել: Մաքրած վիճակում այն պետք է կշռի 300-350 գ: 5-6 կիտրոնը և նեխուրի արմատը քերել, լցնել էմալապատ կաթսայի մեջ: Վերջինս տեղադրել ավելի մեծ կաթսայի մեջ, որտեղ ջուր է լցված, դնել մարմանդ կրակին և 2 ժամ եփել գոլորշու վրա: Սառեցնել, պահել սառնարանում: Խմել օրը 1 անգամ՝ ուտելուց կես ժամ առաջ: Մեծահասակների չափաբաժինը 1 ծ/գ է, իսկ փոքրերինը՝ 1 թ/գ: Բուժման կուրսը 1-2 ամիս է:

❖ Չաքարախտի սկզբնական շրջանում շատ օգտակար է մոշի եփուկը:

❖ Օգտակար են կանաչ լորին, ցիտրուսային մրգերը, նուշը, վարունգը, բողկը, եգիպտացորենը, խավիծը:

❖ Ըստ տիբեթական բժշկության, շաքարախտը հնարավոր է բուժել 10 օրում, եթե իհարկե իիվանդն ունի հավատ ու կանք: Այդ օրերի ընթացքում պետք է սնվել միայն բրնձով, լոբով և կլոր դդումով: Բրինձը լավ լվանալ, ավելացնել ջուր, մի փոքր աղ: Մարմանդ կրակով եփել այնքան, մինչև պատրաստ լինի: Նախօրոք եփված 50 գ մանր կարմիր լորին ավելացնել բրնձին: Ուտել առանց յուղի՝ խորոված կլոր դդումի հետ:

❖ Խմել թթու դրած կաղամբի ջուր. այն նպաստում է արյան մեջ շաքարի քանակի նվազեցմանը:

❖ Չաքարային դիաբետի բուժման համար կիրառվում է դամճամերը:

❖ Խորհուրդ չի տրվում ուտել սալորաչիր:

❖ Քացի փոխարեն օրվա ընթացքում ուտել 1-1,5 կգ եփած կարտոֆիլ:

❖ Մազմիումը, որը պարունակվում է կակաոյի, ընկույզի, ընդեղենի, ձավարեղենի մեջ, անհրաժեշտ է շաքարային դիաբետով տառապողներին. այն իջեցնում է արյան մեջ շաքարի քանակությունը:

❖ Քրոմը ևս իջեցնում է արյան մեջ շաքարի պարունակությունը: Այն առկա է սև պղպեղի, լյարդի, սև հացի, գարեջրի խնորիչի մեջ:

❖ Քարկավոր է հնարավորինս շատ ծիծաղել, որովհետև այն բարելավում է իիվանդի վիճակը՝ արյան մեջ նվազեցնելով շաքարի պարունակությունը:

ՎԵՐՋԵՐ

❖ Կտրվածքներից առաջացած վերքի վրա խորհուրդ է տրվում դնել ալոեի կիսած տերև և կապել: 5-6 ժամ անց վերքը կկապչի:

❖ Եղինջի տերևները լցնել շշի մեջ, ավելացնել սպիրու, բերանն ամուր փակել և 2 շարաթ թողնել արևի տակ: Այս լուծույթով լվանալ վերքը կամ թռչող դնել. այն կարագացնի ապաքինումը, կպաշտպանի վարակներից:

❖ Եթե վերքի վրա քսեք ընկույզի յուղ, այն շատ շուտ կապացինվի:

❖ Պնդուկի կեղևն այրել, խառնել խոզի ճարպի հետ, քսել վերքին: Վերջինս շատ արագ կբուժվի:

❖ Յին վերքի վրա դնել մոշի ծեծած տերև. այն մաքրում է թարախը, անցկացնում ցավերը:

❖ 100 գ ձիթապտղի յուղը, 8 գ դեղին մոմը, 5 գ սպիտակ մոմը, 20 գ սոճու խեժը (բևեկնախեժ), 1 թ/գ թարմ սերուցքային կարագը խառնել և դնել մարմանդ կրակին: 10-15 րոպե անընդմեջ խառնել՝ հեռացնելով փրփուրը: Դեղամիջոցը լցնել ապակյա անորի մեջ և պահել: Օգտագործելիս այն պետք է քսել թանգիֆին և դնել վերքի վրա:

❖ Բողկի հյութը քամել, ավելացնել մեղր (1:1): Դրանով մշակել թարախակալած վերքը:

❖ Սխստորը մեղրի հետ խառնել, դնել թարախոտ վերքին: Այն կմաքրի թարախը և կհանգստացնի ցավը:

❖ Սեխի փափուկ մասը քսել վերքի վրա:

❖ 2 բաժին ձիթապտղի յուղը և 1 բաժին մաքուր մեղրամոմը լցնել կաթսայի մեջ, մարմանդ կրակի վրա եռացնել: Քսուքը սառելուց հետո լցնել ապակյա անորի մեջ: Վերքը ջրածնի պերօքսիդով լվանալ և վրան դնել այդ սպեղամին:

❖ Ավելուկի արմատը ծեծել, ավելացնել քացախ, դնել վերքին:

❖ Միզարուժությունը խորհուրդ է տալիս նոր առաջացած վերքերը լվանալ մեզով: Օգտակար են նաև հին մեզով դրված թրջոցները:

❖ 30 գ էվկալիատի չոր տերևների վրա լցնել 1 բաժակ եռացրած ջուր, 30 րոպե եփել՝ անընդմեջ խառնելով: Թողնել սառի, այնուհետև քամել: Թանզիֆը եփուկով թրջել և դնել վերքի վրա: Յրաշալի միջոց է երկար ժամանակ չսպիացող վերքերի դեպքում:

❖ 1 ճ/զ հազարաթերթիկի վրա լցնել 1 բաժակ եռացրած ջուր և մարմանդ կրակի վրա 15-20 րոպե եփել: Ստացված եփուկով լվանալ վերքը և թանզիֆով հաճախակի թրջոցներ դնել: Այն դադարեցնում է արյունահոսությունը, կանխում է վերքի բորբոքումը:

❖ Թարմ արևօրիդիկի գլխիկները կտրատել, լցնել ապակյա տարայի մեջ, ավելացնել բուսական յուղ (1:2) և 1 ամիս դնել ուժեղ արևի տակ: Թանզիֆը թարախել յուղի մեջ, դնել վերքին, գրգռված մաշկին: Այն բուժում է վերքը՝ կանխելով բորբոքային երևույթները:

❖ Կտավատը բովել, աղալ՝ դարձնելով այսուր, խառնել մոմի ու մեղրի հետ և դնել վերքին:

❖ 1 ճ/զ ազնվամորու տերևների հյութը խառնել 4 ճ/զ կարագի հետ և քսել թարախոտ վերքին:

❖ Գիհու չորացրած տերևները մանր աղալ կամ թարմ տերևը ծեծել, մեղրով շաղախել և դնել բորբոքված վերքի վրա: Այն մաքրում է սևությունը, իջեցնում ուռուցքը:

❖ Եզան աչք բույսը խառնել մոմի և յուղի հետ, քսել թարախային այտուցների վրա:

❖ Եղինջի տերևներն աղով ծեծել, դնել վերքի վրա: Այն շատ արագ կմաքրվի և կլավանա:

❖ Վերքի վրա քսել ճակնդեղի հյութ:

❖ Մածունի շիճուկն ունի մանրէասպան հատկություն: Նրանով կարելի է մաքրել վերքերը, կտրվածքները:

❖ Կտավատի փոշիով և ջրով շիլա պատրաստել, լցնել թանգիֆի վրա, դնել վերքին և բրդյա կտորով փաթաթել:

❖ 30 գ կեչու բողբոջների վրա լցնել 1 լ սպիրտ (70°) թնդության: Ստացված դեղամիջոցով լվանալ վերքը և թանգիֆով թրջոցներ դնել:

❖ Կեչու բողբոջներից թուրմ կամ եփուկ պատրաստել: Դրանով թրջոցներ դնել: Այն բուժում է թարմ և նույնիսկ խոր վերքերը:

❖ 1 ճ/գ այծի կամ գառան ճարպը, 0,5 ճ/գ կերակրի աղը և 1 ճ/գ մանր կտրատած սոխը լցնել հավանգի մեջ ու լավ տրորել: Խառնուրդը դնել հին և թարախսակալած վերքի վրա, թողնել մեկ օր: Սկզբում ցավը կուտեղանա, բայց շուտով վերքը կմաքրվի ու կսպիանա: Սպեղանին ամեն օր փոխել: Այս գործողությունը պետք է կիրառել այնքան ժամանակ, քանի դեռ վերքն անբողջովին չի մաքրվել:

❖ Վերցնել 2 բաժին փայտայուղ (այն կարելի է փոխարինել ձիթապտղի յուղով) և 1 բաժին մեղրամում: Լավ եփել, մինչև ստացվի յուղանման զանգված: Վերքը մաքրուր լվանալ և քսել այս խառնուրդը: Հարկ եղած դեպքում վերքը կարելի է վիրակապել:

❖ Խորհուրդ է տրվում վարակված վերքի վրա քսել ճզմիչով անցկացրած սոխ:

❖ Խոզի փորոտիքի ճարպը մի փոքր ալյուրով տապակել, այնուհետև կաթ ավելացնել, եռացնել, մինչև խառնուրդը նմանվի մածուկի: Հաստ շերտով քսել թանգիֆի վրա ու դնել վերքին: Վիրակապը 10 ժամ թողնել: Գործողությունը կրկնել 3-4 անգամ: Այս դեղամիջոցն օգտակար է թարախոտ վերքերի, կեղանքների (լավացող վերքի վրա գոյացող չոր կեղլ) դեպքում:

❖ Վերքի վրա չիշխանի յուղ քսել: Այն ստանալու համար անհրաժեշտ է չիշխանի պտուղները լավ տրորել, քամել (կարելի է անցկացնել հյութաքամիչով), հյութը լցնել ապակյա տարայի

մեջ: Որոշ ժամանակ անց յուղը դուրս կտա և կզատվի հյութից:

❖ Վերքի արյունահոսությունը դադարեցնելու համար վրան դնել սառույց կամ սառը թրջոց:

❖ Վերքի արագ ապաքինման համար խորհուրդ է տրվում օգտագործել արևքուրիիկի թուրմից պատրաստված տաք թրջոցներ:

❖ Սալորենու տերևները մանրել, դնել թարախոտ վերքի վրա: Այս կմաքրի վերքը՝ բուժելով այն:

❖ Կաղնու կեղևի եփուկով լոգանքները նպաստում են վերքերի սպիացմանը, վերացնում են բորբոքումները: Հարկավոր է կաղնու կեղևը չորացնել, մանրել, մի քանի ժամ թողնել սառը ջրի մեջ, այնուհետև կես ժամ եռացնել: Եփուկը քամել՝ խառնելով լոգանքի ջրին:

❖ Դժվար բուժվող վերքի վրա դնել ձիաձետի եփուկով թրջոցներ:

❖ Երիցուկի ծաղիկների վրա սառը ջուր լցնել, 10 րոպե եռացնել փակ բերանով կաթսայի մեջ և ստացված եփուկը խառնել լոգանքի ջրին: Երիցուկային լոգանքները, ի շնորհիվ երերայուղերի, բուժիչ ազդեցություն են գործում վերքերի և թարախապալարների բուժման վրա:

❖ Չորացրած լորին աղալ, գրեթե փոշի դարձնել և ցանել թարախոտ վերքին:

❖ Վերքը կմաքրվի, եթե նրա վրա այծի ճարպ քսեր:

❖ Թզենու տերևներից արտադրվող հյութը քսել վերքին:

❖ Վերքի և խոցի վրա քսել ընկույզի յուղ:

❖ Ընկույզենու տերևները գարնանը հավաքել, խառնել ձեթի կամ յուղի հետ՝ ստանալով քսութ: Կամ էլ տերևների վրա լցնել սպիրտ և այդ լուծույթը կիրառել վերքի բուժման համար:

❖ Խակ ոլորը խառնել ձվի սպիտակուցի հետ և ստացված խյուսը քսել թարախակալած վերքի վրա:

❖ Արյունահոսող վերքին քսել դդումի մոխրի և քացախի կամ՝ ավելուկի ծեծած արմատի և քացախի խառնուրդ:

ՓՈՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

❖ Զենդիատվող լուծի դեպքում 1-2 օր ծոմ պահել, խմել մեծ քանակությամբ կիսաքաղցր թունդ թեյ՝ կիտրոնով կամ կոնյակով (1-2 թ/գ կոնյակը՝ 1 բաժակ թեյին):

❖ Սիրիուս և Յեռավոր Արևելքում փորլուծության և դիգենտերիայի ժամանակ օգտագործել են արյունխմիկի եփուկ: 2 թ/գ արյունխմիկի խոշոր ծեծած արմատի վրա լցնել 1 բաժակ եռացրած ջուր, 30 րոպե եփել, սառեցնել և քամել: Ընդունել 1-ական ճ/գ օրը 5-6 անգամ՝ ուտելուց առաջ:

❖ 300 գ ընկույզի միջնապատի վրա ավելացնել 250 մլ սպիրտ, թողնել 3 օր: Օգտագործել 6-10 կաթիլ՝ խառնելով եռացրած ջրին:

❖ 1 բաժակ բրնձին ավելացնել 7 բաժակ սառը ջուր, մարմանդ կրակի վրա եփել: Ստացված եփուկն առանց բրնձի 2 ժամը մեկ 1/3 բաժակ խմեցնել փորլուծություն ունեցող երեխային:

❖ Յափի քարածիկի ներսի թաղանքը լվանալ, չորացնել, փոշի դարձնել: Ընդունել տաք ջրով օրը 1-2 անգամ՝ 0,5 թ/գ: Օգտակար է մեծահասակների և երեխաների (ոչ նորածին) փորլուծության ժամանակ:

❖ 1 ճ/գ երիցուկի չորացրած ծաղիկների վրա լցնել 200 գ եռացրած ջուր, կես ժամ թողնել, քամել և օրը երեք անգամ, կերակրելուց առաջ, ճաշի գդալով խմեցնել օրը երեք անգամ՝ կերակրելուց առաջ:

❖ Փոքր երեխայի լուծի դեպքում 1 թ/գ անխոնի չորացրած սերմի վրա լցնել 200 գ եռացրած ջուր, կես ժամ թողնել, քամել: ճաշի գդալով խմեցնել օրը երեք անգամ՝ կերակրելուց առաջ:

❖ Յապալասի եփուկը լուծը բուժելու հնագույն միջոցներից է: Այն պետք է պատրաստել թեյի նման:

❖ Չամիչի կորիզները շատ օգտակար են փորլուծության դեպքում: Պետք է դրանք երկար ժամանակ ծամել և կուլ տալ:

❖ Խակ ընկույզներն առանց կեղևելու կտրատել, 3/4-ի չափով լցնել 0,5լ ապակյա տարայի մեջ, վրան ավելացնել օղի, բերանը փակել, 3-4 օր թրմել: Ընդունել օրը երկու անգամ՝ 0,5 թ/զ:

❖ Սերկնիլի կորիզով և կեղևով օրը երեք անգամ թեյ խմել:

❖ Խմել արկքուրիկից պատրաստված թունդ թեյ:

❖ 20 գ մոշի չորացրած արմատները 3 րոպե եռացնել 0,5 լ ջրի մեջ, բաժանել երեք մասի և օրվա մեջ երեք անգամ խմել:

❖ Լուծի և դիգենտերիայի ժամանակ հարկավոր է նռան չորացրած կեղևը մանրել, վրան 1 բաժակ ջուր ավելացնել, 15 րոպե մարմանդ կրակի վրա եփել: Ստացված դեղամիջոցը խմել 2 օրում:

❖ Մեղմ լուծի դեպքում խորհուրդ է տրվում ուտել բրնձով շիլա:

❖ Շատ օգտակար են հոնի հյութը, մուրաբան, կոմպոտը, կիսելը:

❖ Պետք է խմել տանձի կոմպոտ, սակայն հատիկներն ուտել չի կարելի:

❖ 20 գ կաղնու մանրած կեղևին ավելացնել 1 բաժակ ջուր և 10 րոպե եռացնել: Եփուկը խմել ողջ օրվա ընթացքում:

❖ 3 թ/զ մանդակի կոճղարմատին ավելացնել 1 լ ջուր, եռացնել, սառեցնել և քամել: Եփուկը խմել օրը 2-4 անգամ:

❖ Սև սուրճին ավելացնել 1 պտղունց լինոնի աղ և խմել: Փորլուծությունը շատ շուտ կդադարի:

❖ Շատ օգտակար են այծի կաթը, քամած մածունը, թուզը, ինչպես նաև՝ անանուխը, ալոնը, եզան լեզուն, զայլուկը, ծիծեռնախոտը, խնկեղեգը, ծորենին, ծիածետը, կատվախոտը, դանձիլը, օշինդրը:

❖ Խմնձորի հյութը խառնել թթու նռան գինու հետ և խմել:

-57- ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

❖ Վրացիները լուծի դեպքում կարմիր թութ կամ սեխս են ուտում:

❖ Նորան ծաղիկները լցնել էմալապատ կաթսայի մեջ, վրան ավելացնել ջուր, եռացնել, քամել և խմել:

❖ Լուծը կդադարի, եթե խմեք նշի կորիզների կեղևից պատրաստված եփուկ:

❖ Խաղողի հատիկը կեղևով ու կորիզով լավ ծամել և կուլտալ:

❖ Ազնվամորու տերևների վրա լցնել ջուր, եռացնել, քամել ու խմել:

❖ Օգտակար է կալիումի պերմանգանատի (մարգանցովկա) թույլ լուծույթը: 0,5 լ ջրին խառնել 2-3 բյուրեղիկ կալիումի պերմանգանատ: Կրօքի երեխաներին տալ թույլ վարդագույն, իսկ մեծահասակներին՝ թունդ վարդագույն լուծույթը: Անհրաժեշտ է ընդունել առավոտյան և երեկոյան: Մեծահասակներին մեկ անգամվա համար հարկավոր է 1 բաժակ լուծույթ, իսկ երեխաներին՝ 0,5 բաժակ: Սակայն պետք է զգուշանալ, որ բաժակի տակ չմնան կալիումի պերմանգանատի չլուծված բյուրեղիկներ, որոնք կարող են այրել բերանը և կոկորդը: Խմելուց բացի, խորհուրդ է տրվում նաև հոգնա ամել: Այս նիշոցը կրօքի երեխաներին բազմիցս փրկել է մահից:

❖ Յում կաղանքը կարգավորում է աղիքների աշխատանքը, իսկ եփվածը պնդացնում է փորը:

❖ Ավելուկի արմատներն ու սերմները պնդացնում են փորը՝ վերացնելով փորլուծությունը:

❖ Բազուկը ոսպի հետ եփել և ուտել: Այն դադարեցնում է լուծը:

❖ Արյունոտ լուծի ժամանակ խմել գազարի հյութ:

❖ Մոշի տերևներից եփուկ պատրաստել և խմել:

❖ Ուտել փոխինձ կամ դրանով պատրաստված որևէ կերակրատեսակ:

ՀԱՍԵՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՊԱՐ ԳԵՎՈՒՄ

Յամենունքները, սննդին համ ու հոտ պարզելուց զատ, նաև շատ առողջարար են: Այս եզրակացությանն են հանգել դեղագիտության և սննդագիտության մասնագետները՝ կատարելով բազմաթիվ հետազոտություններ:

Սննդագիտության մասնագիտական հետազոտությունների կենտրոնի վարիչ բժիշկ Ռ. Անդերսոնը նշում է, որ ինքն ամեն առավոտ ուտում է դարչինով համեմված վարսակից պատրաստված խյուս: Յայտնի է, որ վարսակը նվազեցնում է արյան մեջ խոլեստերինի քանակությունը, իսկ դարչինը պահպանում է արյան մեջ շաքարի հավասարակշռությունը:

Բժիշկ Անդերսոնը հայտնաբերել է, որ դարչինը հնդկաքրքումի հետ գործածելիս եռապատկում է ինսուլինի գործունեությունը, որն էլ նպաստում է գյուլկոզայի նյութափոխանակությանը: Շաքարային դիաբետով տառապող բազմաթիվ հիվանդներ տեղեկացրել են բժիշկ Անդերսոնին, որ իրենց իրենց շատ լավ են զգում, քանի որ ամեն օր իրենց սննդի մեջ կիրառում են քառորդ գդալի չափով դարչին: Այն նաև ամրացնում է ստամոքսը, միզապարկը, մաքրում է երիկամները, օրգանիզմից դուրս է մղում լորձը, հեռացնում է ճիծուներին:

Քիմիոնը բիբլիական ժամանակներից հայտնի մի համեմունք է, որը Յրեաստանում օգտագործվում է իբրև հակաքաղկեային միջոց: Քիմիոնով կիմնականում համենում են լորուց, ոսպից պատրաստվող ուտեստները, ինչպես նաև օգտագործում են բաստուրմա պատրաստելիս: Այն մարդիկ, ովքեր կերակրի

մեջ քիմիոն շատ են օգտագործում, առավել հազվադեպ են հիվանդանում միզափամփուշտի և շագանակագեղձի քաղցկեղով:

Ուսումնասիրելով հակաքաղցկեղային հատկություններ ունեցող քսան տեսակի բույսերը և համեմունքները՝ պարզվել է, որ քիմիոնն այդ բույսերի մեջ ոչ մի մրցակից չունի և ամենաարդյունավետն է: Քիմիոնի գործածությունը նպաստում է մարմնում GSE նյութի գոյացմանը: Սա օժտված է հակաքունավորիչ հատկությամբ և պաշտպանական միջոց է որոշ տեսակի քաղցկեղների դեմ: Այս ամենից բացի, քիմիոնը կանխում է քրոնոսունների վնասվածությունը, որը պատահում է քաղցկեղածին քիմիական նյութերի գործածությունից: Այս հետազոտությունները կատարվել են Յնդիկաստանի Մադրաս քաղաքի քաղցկեղի ուսումնասիրության կենտրոնում:

Բազմաթիվ գիտափորձերից պարզ է դարձել, որ սև տաքրի գործածությունը մկների մոտ զգալիորեն նվազեցնում է քաղցկեղով հիվանդանալու վտանգը: Սև տաքրի կերակրվող հիվանդ մկների կյանքը 25 %-ով երկարում է: Բացի այդ, այն սնունդը դարձնում է դյուրանարս, միզանուշ է, ներծծում է փայծաղի այտուցվածությունը, ջերմացնում է յարդն ու ստամոքսը, օրգանիզմը մաքրում է տափակ ճիճուններից: Շատ օգտակար է հազի և մրսածության դեպքում: Սև տաքրի լավագույն հակաբույնն է:

Կոճապղպեղը (հնբիր) 9-րդ դարից հայտնի է եղել իբրև սրտխառնութը կանխող լավագույն դեղամիջոց: Մի քանի տարի առաջ Դանիայի բժիշկներն այն կիրառել են հղի կանաց սրտխառնութը կանխելու նպատակով: Կաղուց ապացուցված է, որ այս բույսն ավելի անվնաս և արդյունավետ է, քան՝ սրտխառնութի ժամանակ կիրառվող որևէ այլ դեղամիջոց:

Բժիշկները մի խումբ հղիների ամեն օր տալիս էին 1 գ կոճապղպեղ, իսկ մեկ այլ խմբի բուժում էին դեղերով: Յետազոտություններից պարզվել է, որ կոճապղպեղով բուժվող հղի կանայք իրենց ավելի լավ էին զգում, քան նրանք, ովքեր դեղեր էին

ընդունում: Կոճապղպեղն օրգանիզմի վրա որևէ կողմնակի ազդեցություն չի գործում:

Դայտնի է, որ սխտորը նվազեցնում է արյան մեջ խոլեստերինի քանակը, իշեցնում է արյան ճնշումը, մեծացնում սեռական կարողությունը, թուլացնում է փորը, օրգանիզմից դուրս է մղում ճիճուները, բուժում է թուքքը, էկզեման, օգտակար է փայծաղի և աղեստամոքսային համակարգի հիվանդությունների դեպում, լավացնում է մարսողությունը: Այն ունի նաև հակաքաղցկեղային հատկություն:

Կալիֆոռնիայի նահանգի համալսարաններից մեկում կատարվել է հետևյալ գիտափորձը՝ սխտորի հյութը լցրել են փորձանորի մեջ, որտեղ նախապես գետեղված են եղել մկան և մարդու քաղցկեղային բջիջներ: Մեկ շաբաթ անց հիվանդ բջիջների աճը սխտորի հյութի մեջ կասեցվել է, իսկ առողջ բջիջների վրա հյութը որևէ ազդեցություն չի գործել:

Երուսաղեմի բժշկական ինստիտուտի դոկտոր Դ. Միրելմանը հայտնագործել է սխտորի բացառիկ հատկություններից մեկը՝ հաստատելով, որ այն վերացնում է մարդու օրգանիզմի ախտածին մանրէները:

Ոմանք խորհուրդ են տալիս հում սխտոր ուտել, ոմանք էլ առաջարկում են այն ուտել եփած վիճակում, որովհետև եփած սխտորը պարունակում է այնպիսի նյութեր, որոնք կանխում են արյան թանձրացումը: Եփած սխտորը բաղցրանում է, շատ հաճախ էլ՝ դառնանում: Սխտորը կիրառում են նաև հնեցված ձևով՝ մի քանի օր պահելով գինու կամ քացախի մեջ: Այդպես վերանում են սխտորի հում ու կծվությունը:

Այսպիսով, սննդի մեջ կիրառելով վերոհիշյալ համեմունքները՝ դուք կխուսափեք մի շարք հիվանդություններից և առողջ կլիմեք:

ԱՂԱՎՆՈՒ ԲՈՒԺԻՉ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԵՐԸ



Զվող թռչունների այս ցեղը, որն ունի 255-290 տեսակ, տարածված է ամենուրեք: Քայաստանում կա աղավնիների հինգ տեսակ՝ անտառայինը, տատրակը, հորալը, որոնք պատկանում են չվող տեսակին, իսկ թխակապույտը և փոքր տատրակը առավելապես տարածված են քաղաքներում ու համարվում են ընտանի թռչնատեսակ: Մսատու, փոստային, դեկորատիվ աղավնիներն ընտանի թռչուններ են ու բուժվում են գործե ամենուրեք: Քայաստանում առավելապես տարածված են մսատու և դեկորատիվ տեսակները:

Աղավնին, սննդամբերք լինելուց զատ, օժտված է մի շարք բուժիչ հատկություններով: Այդ մասին կան բազմաթիվ վկայություններ, որոնք փաստում են, որ այդ թռչունը շատ ու շատ հիվանդություններ է բուժել:

Աղավնու միսը շատ օգտակար է, այն ավելացնում և նորոգում է արյունը (մեծն ավելի լավ է, քան` ծագը): Կարիճից խայթվածք կփրկվի, եթե կենդանի վիճակում պատռեք աղավնու փորը և դնեք կծած տեղի վրա: Այն մարմնից դուրս կքաշի թույնը: Աղավնու գլուխը և արյունը շատ օգտակար են աչքերի համար: Եթե գլուխն այրեք, փշրեք և սուրմայի նման քսեք աչքերին, կուժեղացնի տեսողությունն ու կվերացնի աչքերի խավարումը: Իսկ եթե նոր մորթված աղավնու տաք արյունը կաթեցնեք աչքերի մեջ, կվերանա ուռուցքը, կքաշվի շարավը, կմաքրվեն աչքերը:

Աղավնու արյունը չափազանց օգտակար է քթի արյունահոսության դեպքում: Եթե մի քանի կաթիլ լցնեք քթի մեջ, արյունահոսությունը կդադարի:

Մսից և արյունից պակաս օգտակար չեն աղավնու ծերտը, քանի որ շատ հիվանդություններ բուժվում են դրա օգնությամբ: Եթե կարմիր աղավնուն մի քանի օր սնեք կտավատով և 2 դրամ (1 դրամը=2,942 գ) ծերտը խառնեք 3 դրամ դարչինի հետ ու խմեք, կիալվեն և օրգանիզմից դուրս կգան քարերը: Բորբոքված, պինդ կամ թարախակալած խոցերից կազատվեք, եթե դրանց վրա դնեք գարու այսուրից, քացախից և աղավնու ծերտից պատրաստված խյուս-սպեղանի: Եթե ծերտը մեղրի ու կտավատի հետ խառնեք, դնեք պինդ, քարացած ուռուցքի վրա, կփափկեցնի այն՝ ծակելով ու դուրս քաշելով թարախը: Կրակից առաջացած այրվածքի դեպքում շատ օգտակար կարող է լինել ձիթապտղի յուղի և աղավնու ծերտի խառնուրդից պատրաստված սպեղանին:

Ըստ ԵփրեմՎերոիի, եթե աղավնու լեղին քսեք մարմնի որևէ հատվածին, ապա այնտեղ մազ չի աճի:

ԹԹԻ ԲՈՒԺԻՉ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԵՐԸ

Թթենին ամենքին լավ ծանոթ և սիրված պտուղով ծառ է, ո-րը նախկինում հայտնի էր միայն հեռավորարևելյան երկրների բնակչութերին՝ չինացիներին, ճապոնացիներին: Այժմ այն մշակվում է գրեթե ամենուր, իսկ նրա պտուղը՝ թութը, և' բարձրարժեք սննդամթերք է, և' անփոխարինելի դեղամիջոց:

Դայոց աշխարհում թթենին և շերամապահությունը շատ հին արմատներ ունեն: Այդ մասին հիշատակումներ ունի պատմահայր Խորենացին: Նա գրում է, որ բարձրաշխարհիկ հշխան-ները կրում էին մետաքսյա զգեստներ, իսկ մետաքսը, ինչպես հայտնի է, ստացվում է շերամի որդից: Շերամապահության գաղտնիքներին հայերը տիրապետել են դեռևս վաղնջական ժամանակներից:

Դին բժշկարաններում նշված է, որ լավագույն թութը խոշորն ու քաղցրն է: Այն խորհուրդ է տրվում ուտել ճաշելուց առաջ՝ վրայից օշարակ խնելով: Ամիրդովկաթը գրում է, որ թութը բուժում է կոկորդի քաղցկեղը, տերևներից պատրաստված եփուկը՝ կոկորդացավը, իսկ քաղցկեղային հիվանդությունների դեպքում խորհուրդ է տալիս խմել թքի հյութ: Թութը (հատկապես՝ սկը) գորացնում է ստամոքսը: Անորի վիճակում ուտելիս՝ շուտ է դուրս գալիս ստամոքսից՝ մաքրելով աղիքների ողջ պարունակությունը, հետևապես շատ օգտակար է փորկապության ժամանակ: Փորը թուլացնելու հատկությամբ օժտված է միայն քաղցր և հասած թութը, իսկ խակն ու թթուն կապում է ստամոքսը, բուժում կոկորդացավը:

Թութը նպաստում է արյունաստեղծ օրգանների բնականոն

աշխատանքին, օգտակար է սակավարյունության, հեպատիտի, խոլեցիստիտի, հիպերտոնիայի դեպքում. այն թարմացնում է արյունը, սնում է ուղեղը, բացում է ծորանների սպազմը, ունի միզամուլ հատկություն: Շաքարախտով հիվանդներին խորհուրդ է տրվում ուտել կիսաքաղցր բութ: Այն հրաշալի միջոց է նաև հղի կանանց և երեխանների համար, որովհետև մեծ քանակությամբ ֆոսֆոր է պարունակում:

Թութք կիրառվում է և՝ թարմ, և՝ պահածոյացված վիճակում: Նրանից պատրաստված եփուլք՝ դոչարը, հրաշալի դեղամիջոց է և կիրառվում է շնչառական հիվանդությունների ժամանակ: Իսկ թթից պատրաստված մուրաքան և չիրը անփոխարինելի սնունդ են թե՛ երեխանների, թե՛ մեծահասակների համար:

Թթենու տերևները, սքանչելի մետաքսի վերածվելուց զատ, օժտված են նաև կենարար հատկություններով: Եթե թթենու տերևներից խյուս եփեք և այն դնեք ցավող ատամի վրա, ցավը կմեղմանա ու կանցնի: Տերևներից պատրաստված թուրմը (եռացրած ջուրը լցնել տերևների վրա ու մի քանի ժամ թողնել) բուժում է կոկորդացավը: Տերևներից ստացված քանուկը բուժում է պիղծ խոցերը, չորացնում վերքերը:

Սև թթենու տերևները հիանալի միջոց են մազերը ներկելու համար: Պարզապես հարկավոր է տերևներն անձրևաջրով եռացնել և ստացված եփուլով ցայել մազերը: Թեփը կանհետանա, և մազերի աճը կլավանա, եթե թթի հյութը քսեք գլխին ու պահեք 3-8 ժամ:

